

ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ ԺԲ.—ՇՐՋԱՆ Ժ. ՏԱՐԻ Ժ.—ԴԵԿՏԵՄ. 31.

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ ԵՐԿՐԱՑ ԱՄՍԱԳՐՈՅՑ

Ներկայ ԺԲրդ թուով եւ Դեկտեմբեր ամսում Արարատ ամսագրոյս տասներորդ շրջանը լրացաւ, եւ յառաջիկայ 1878 տարւոյ Յունվարէն սկսեալ պիտի փուլթայ Մետասաներորդ (ԺԱ.) շրջանը ոլջունել եւ շարունակել:

Այս առթիւ խորին շնորհակալութիւն մատուցանելով Ամսագրոյս բարեջան գործակալաց եւ ընթերցասէր բաժանորդաց, մեծայոյս եմք զի միեւնոյն սիրով, ջանիւք եւ համակրութեամբ պիտի յարատեւեն եւ յարգեն Արարատը, եւ կրկնդրեմք մեր սիրելի Ազգայիններէ, ինչպէս որ բարեջան Գործակալաց գրուած եւ պատուիրեալ է, գէթ ց 15 յառաջիկայ փետրուար ամսոյ բարեհաճին յայտնել խմբագրութեանս կամ Ս. Էջմիածնի Տպարանական ժողովոյն, եթէ կցանկան նոր շրջանում բաժանորդագրուիլ Արարատ ամսագրոյս, որպէս զի կանխաւ կարեւոր եղածը տնօրինուի, եւ երկուստէք դժուարութեանց առիթ չլարուին:

Բաժանորդագինը չորս ռուբլի է:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՒ

ԳԵՏԱՐԳԵԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ·

Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան մէջ նշանաւոր էջեր եւ դիրք գրաւած է Գետարգել կամ Գետադարձ կոչուած Պետրոս Ա Կաթուղիկոս, եւ ինչպէս նորա օրով Հայոց աշխարհում յաճախած դարանագործութիւնք՝ Անւոյ եւ այլ աշխարհակործան դժբաղդութիւնք եւ արկածներ առաւելապէս տխրաւիթ վիշտ եւ մեծ կսկիծ կազդեն ճշմարիտ Հայոց զգայուն սրտից, նոյնպէս 1022 (ՆՀԱ.) Փրկչական թուականում Խաղտեաց կողմերում՝ Զրօրհնեաց տօնի օրը՝ ներկայութեան Վասիլ կայսեր Յունաց՝ սրբալոյս Միւռոնը ի գեան թափելով եւ ջուրը օրհնելով ընդ իւր ունեցած կենաց փայտով՝ առ վայր մի գետոյն ընթացքը հանդարտեցնելը արդարեւ մեծ զքանչելիք եւ պարծանք պէտք է համարուի, եւ գէթ սոփաւ հոգեկան ոչ սակաւ մխիթարութիւն կիսոխանակուին ճշմարիտ Հայոց աղետակոծ սրտից։

Մեր նպատակ այժմ յիշեալ Գետարգել սուրբ Նշանի կամ կենաց փայտի վերայ միայն խօսել լինելով, 1058 փրկչական թուականում Գետադարձ կոչուած Պետրոս Հայրապետի առ Աստուած փոխուելէն եւ Սեբաստիոյ Ս. Նշան վանքում հանգուցելոյն մարմինը ամփոփուելէն զկնի՝ ոչ Արիստակէս Լաստիվերտցւոյ ժամանակակից պատմագրութենէն՝ եւ ոչ Ուռհայեցւոյն Մատթէոսի՝ Վարդանու՝ եւ այլոց պատմագրութեանց մէջէն պարզապէս չեմք կարող ստոյգ տեղեկութիւն քաղել՝ թէ վերոյիշեալ Գետարձել Նշանը կամ կենաց փայտը ուր մնաց եւ Պետրոս Կաթուղիկոսի սեփհականութիւնն էր, թէ չէ՝ Սենեքերիմ արքայի Արծրունւոյ ի Սեբաստիա տարած սուրբ խաչն էր՝ — զոր ըստ նորին պատուիրանաց 1027 փրկչական թուականում՝ նորա (Սենեքերիմայ) որդիք՝ վերադարձուցին եւ զետեղեցին ի Վարագ՝ ինչպէս իւրեանց հանգուցեալ հօր մարմինը եւս ամփոփեցին ի նոյն վանս։ — եւ եթէ այլ է ի Վարագ տարուածն եւ այլ է Պետրոս Կաթուղիկոսի ունեցածն, ուրեմն վերջնոյնը ինչ եղաւ կամ ուր մնաց։

Կոտայից գաւառում երբեմն՝ ինչպէս նաեւ ներկայ թուականէս մինչեւ մի քանի տասնեակ տարիներ առաջ՝ շէն եղած եւ այժմ շատերու նման բուռոյ բնակարան դարձած Զագավանուց կիսականգուն աւերակաց վերայ գտնուած (փրկչական 1325 եւ) Հայոց ՉՀԴ թուականը կրող մի արձանագրութեան մէջ թէպէտ նոյն վանուց անունը որոշակի չէ յիշուած, սակայն յատուկ անուն չունենալով թէ չէ՝ Զաքաւանի մօտ գտնուելոյն համար արդեօք՝ Զագ-վանի յիշուիլը կը գտնեմք պատմութեանց մէջ՝ (1441 թ.) Հայոց Հայրապետութեան վերջին անգամ այրը ի Ս. Էջմիածին փոխադրուելոյն եւ նոր Կաթուղիկոսի (Կիրակոս Վիրապեցւոյն)

ընտրութեան աւթիւ հաւաքուած ժողովականաց մէջ Սարգիս Վարդապետ Զաքավանից եղած եւ գրուած լինելով, սակայն նկատելով որ՝ նոյն աւերակ վանուց մէջ երկու տաճար կայ՝ մինը մեծ եւ միւսը փոքրիկ իբր մատուռ՝ ինչպէս որ ականատես եղած եմ, մեծը՝ բոլորտիքը գանուած շինուածոց եւ մեծ պարսպին մնացորդներովը գրեթէ հիմքերէն տեղ տեղ քիչ բարձր դիրքերովը կտեսնուին, իսկ միւս մատռանմանը՝ որ մեծէն 8—9 քայլէն աւելի բացակայ կը գտնուի եւ կիսակործան, եւ յիշատակարանները սորա վերայ են, որոյմէ երկուքը թուական ունին, — մինը վերեւ յիշածս է՝ եւ երկրորդը՝ ՌՄԷ (այս ինքն իբր 1758) թուականում արձանագրուած է, յորում թէ Զաքավանի անունը եւ թէ Գէորգէլեան Նշան յիշուած են։ Մի ուրիշ՝ երրորդ կարեւոր արձանագրութիւն եւս կայ՝ որոյ թուականը եղծուած է, յորում Գրիգոր Կաթուղիկոս ամենայն Հայոց Վարդապետաց եւ Եպիսկոպոսաց ղՁագ (աւանը) ընծայ Գետադարձ Ս. Նշանին շնորհելը կարձանագրէ, եւ եթէ այս յիշատակեալ Գրիգոր Կաթուղիկոսը ի կենդանութեան վերոյիշեալ Կիրակոսին յաջորդողը եւ Մակուէյի Զալալէէանն է՝ որ 1443 թուականում Հայրապետութեան գահը բարձրացաւ, ուրեմն երկու կարեւոր թուականաց մէջ թեթեւ տարբերութիւն գտնուելոյն համար գուցէ ներելի լինի կարծելը՝ զի թէեւ երկու անունը եւս անխրատիր տրուած է յիշեալ վանուց՝ բայց աւելի սովորական կերպով՝ Զաքավանի կոչուած է եւ առանձին գտնուած փոքրիկ տաճարը Ս. Նշանի անուամբ շինուած է՝ ուստի կկոչուի եւ նա է բուն Գետարգել Ս. Նշան եկեղեցին. բայց թէ որն է հին կամ կանխաւ շինուած է, մեծ տաճարը թէ փոքրը, ստոյգը ասելը դժուար է։ Առանցմէ այսքանը հետազօտելով պէտք է եզրակացնել՝ թէ ինչու համար Գետարգել Ս. Նշան անունը եւս կրկրէ յիշեալ Զաքավանքը կամ փոքրիկ եկեղեցին։

Անշուշտ Պետրոս Գետադարձ Կաթուղիկոսի ունեցած Գետադարձ Նշանը կամ Գէորգէլ Կէնաց փայտը կամ նորա մի մասը ասա երբեմն պահուած պիտի լինի։

Ուրեմն Սեբաստիոյ Ս. Նշան վանքում գտնուածը ի՞նչ էր։

Եթէ յիշեալ Գէորգէլ Կէնաց փայտը Կաթուղիկոսարանի սեպհականութիւնն էր՝ ուրեմն Պետրոս Կաթուղիկոսի առ Աստուած փոխուելէն զկնի՝ պէտք էր որ վերադարձնէին յԱնի՝ եւ ընդհակառակն՝ ի՞նչպէս կարելի է մեկնել՝ որ ուղղակի Զաք աւանը կամ Զաքավանքը բերուած լինի եւ նորա համար եւ անուամբ փոքր եկեղեցին հաստատուած։

Թէ այսպէս եւ թէ այնպէս՝ աւելի հաւանականագոյնն է կարծել՝ զի գուցէ մի նշանաւոր անձն յիշեալ Գէորգէլ Կէնաց փայտէն մի մասն ի պարգեւի մասին ընդունած՝ եւ Զաքավանուց ընծայած լինի՝ կամ թէ նորա համար Զաքավանքը հիմնուած լինի՝ ուստի երբեմն թէ յիշեալ վանքում եւ թէ Սեբաստիոյ Ս. Նշան վանքում Գէորգէլ Կէնաց

ֆոյթը՝ երկու կամ աւելի բաժին եղած լինելով՝ գտնուած լինի։

Գուցէ ապագայում աւելի որոշ եւ ընդարձակագոյն տեղեկութիւն գըտնուի կամ ստուգապատում հին ձեռագիրներու յիշատակարաններէն եւ կամ պատմութեանց հատուածներէն կարեւոր միանգամայն մանրամասն ճիշտ տեղեկութիւնքը քաղել հնարաւոր լինի, զոր նաեւ Սեբաստիայում քննելը եւ իմանալը հեշտ է՝ եթէ հին եկեղեցւոյ՝ կամ որ նոյն է՝ Ս. Նշան վանուց շինութեան պատմութիւնը կամ արձանագրը կայ եւ ըստ բաւականին պատմութիւնը կպարունակէ։

Արդ յիշեալ Գեոարգել Սուրբ Նշանի պատմութեան վերաբերեալ մի կարեւոր մաս համարելով՝ ի ստորեւ արժան կըհամարիմք մի ձեռագիր նամակէ քաղուած հեռագայ պարբերութիւնքը հաղորդել ի տեղեկութիւն բանասիրաց միանգամայն համայն մերազանց, յորում նաեւ պէտք է աւելի դիտել եւ եզրակացնել՝ որ Ս. Նշան վանուց եկեղեցւոյ խորանին կամ սեղանոյն կամարին մէջ խնամքով՝ զգուշութեամբ զետեղուած եւ պահուած մի խաչը եւ ի նմին ամփոփուած մասունքը՝ աննշան բան չէին կարող լինել, մանաւանդ նկատելով զի նոյն Ս. Նշանի նշանաւոր՝ երբեմն բաղում միաբաններով ճոխ՝ եւ բաւական հին վանքում թաղուած է Պետրոս Գետադարձ Հայրապետը, հետեւաբար եթէ նորին սեփհականութիւնն էր կամ թէ նորա ունեցած կենաց փայտի մասը եւս Սենեքերիմ արքայ Արծրունւոյ ի Վարագ վերադարձունել տուածէն *) ուրիշ էր, անշուշտ յիշեալ վանքում կմնար, զոր հեռագիտէ յաջորդող խառնաշփոթ ժամանակներում՝ մանաւանդ նախանձորդ Յունայմէ շրջապատուած լինելով՝ եկեղեցւոյ հիմանց մէջ ամփոփելէն ուրիշ ապահով տեղ ու միջոց գտնել չէր կարելի յափշտակիչներէն ազատ պահելոյ համար, գուցէ եւ յատուկ նոյն Ս. Նշանի անուամբ յիշեալ եկեղեցին կառուցած լինին եւ վանքը համանուն-բար վերակոչած. ուստի 1815 թուականում երբ Սեբաստիոյ Ս. Նշան վանուց եկեղեցին ի հիմանց նորոգ շինել ուզելով կքանդէին՝ անակնկալ կերպով կըգտնուի եւ կյայտնուի յիշեալ Ս. Նշանը, որոյ համար այսր ի Ս. Էջմիածին լուր հասնելով՝ միաբան եղբայրներէն ոմանք՝ եւ յականէ յանուանէ յիշելով՝ երբեմն Վանու Ծայրագոյն Նուիրակ եղող Կարնեցի Մինաս Վարդապետն (եւ Եպիսկոպոս) մանրամասն տեղեկութիւն խնդրած են, եւ ի 4 ն Հոկտեմբերի 1816 ամի Սեբաստիայէն Գալուստ Վարդապետ (որ եւ Եպիսկոպոս) մի նամակում նորագիւտ Սուրբ Նշանի համար եւս գրած է Մինաս Վարդապետին **), յորմէ կարեւոր մա-

(*) Եթէ միեւնոյնը եւս լինէր, կհաւանիմ կարծել, որ դարձեալ ասոի մի քանի մասը կարելի է առնուած լինի։

(**) Նամակի վերնագիրը միայն Մինաս վարդապետի անուամբ է, իսկ հասցէին բովը կցուած էր եւ կամ առ շիրանի (հնձանատեսուչ) Դանիել Վարդապետ։ — Նամակագիր Գալուստը Արեղայ ձեռագրած է, իսկ կնքոյ մէջ Վարդապետ փորագրուած է։

սը քաղած եմք եւ մեք, որ արդարեւ թէ ուշադրութեան արժանի է՝ եւ թէ պատմութեան համար մի կարեւոր հատուած է։

Վ. Ե. Մ.

Ահաւասիկ յիշատակեալ քաղուածը։

«Եւս դարձեալ խնդիր էիր՝ վասն նորագիւտ կենաց փայտին՝ թէ արդեօք՝ զՈրպիսի գոյաք, եւ զՈրպիսի ինչ մասնէ։ Թէպէտ երկար է սքանչելագիւտ պատմութիւնն, բայց այժմ համառօտ գրեցից. զի հերու կամեցաք զայն Սուրբ Նշանի յիշեցեալ եկեղեցին, (որ՝ վասն յոյժ հնաշէն գոլոյն՝ թէ տաճարի առաստաղն եւ թէ որմունքն, խախտեալ եւ բեկբեկեալ էին,) քակել եւ նորոգ սրբատաշ քարամբք ընդարձակ շինել։ Եւ ի շաբաթօրն Երեւման սրբոյ Խաչին, մինչ մշակքն քակէին զքարինսն եւ զաղիւսն եւ քակելով հասեալ էին՝ մինչեւ ցկամար սեղանոյն, եւ յանկարծ ի հարկանել զփայտատան՝ ի մէջ կրամած քարանցն՝ ի յաջակողմն կամարին, անդ գտեալ էին պատուհան մի՝ ընդգբրկեալ ի միջի կրամած քարանց եւ աղիւսոցն, կղմնդրով գոգեալ եւ ամփոփեալ. եւ ի միջի նոյն պատուհանին՝ երեւեցաւ թղաչափ մի բոլորաշէն արծաթեայ սկուտեղ մի՝ եւ նշմար ոսկեթել ծածկոցի միոյ ի վերայ տարածեալ, բայց յոյժ փտեալ եւ ի փոշի փոխարկեալ. վասն որոյ եւ ի յերեւիլն՝ հոտ անմահութեան բուրեցաւ. եւ անդէն ահիւ եւ դողութեամբ մերձեցեալ անարժանիս համբուրիւ բարձի ի պատուհանէն, եւ տարաք ի սուրբ յեկեղեցին՝ տեսանել թէ զինչ իցէ. եւ երկիւղիւ մեծաւ բացաք զբերանն արծաթեայ սկուտեղն, եւ տեսաք դարձեալ հնացեալ ոսկեթել ծածկոցիւ ծածկեցեալ թանձր եւ ստուար խաչ մի արծաթեայ ձուլածոյ, գոլով եւ ի վերայ նորին եղեալ սրբոց ոսկերք, բայց անյայտ ի մէնջ՝ թէ որոց սրբոցն իցէր, եւ կամ յօդուածոց որ տեղեացն։ Եւ առ յայսքան տեսութիւնս ոչ հանգեան սիրտքն մեր, մինչեւ դերկուս ժամս տարակուսի լեալ խորհէաք ճըմլեալ սրտիւ, արդեօք՝ զի՞նչ ինչ մեծագոյն մասն լեալ իցէ ի ծոցոջ նոյնոյ մեծի խաչին. եւ մինչ երկուադեալ շրջշրջեալ որոնէաք դողութեամբ մեծաւ, թերեւս գտցուք զտեղի ինչ բանալ եւ զայն խաչն, եւ Աստուծոյ գտաք զտեղին բացման եւ փակման. բացաք ուրախութեամբ եւ զայն, եւ տեսաք ի միջի նոյնոյ խաչին՝ յար եւ նման ըստ պահրանի նոյն խաչին, դարձեալ մատնաչափ մի խաչ ի միջի յիշեցեալ արծաթեայ խաչին, բայց այն ոչ արծաթեայ այլ ձուլեալ յստակ եւ պատուական յոսկւոյ սրբոյ. եւ առ եզերք շրջապատ ոսկեայ խաչին մարգարտօք հիւսեալ. եւ դարձեալ խաչ ի միջի խաչի տեսանելով՝ ոչ բնաւ ժուժեալ հանդարտէին սիրտքն մեր, եւ նմա ձեռնամուխ լինիլ եւ բանալ ի յահէն երբէք ոչ իշխեաք, վասն որոյ եւ յայնմ աւուր ի բաց կացաք. եւ քարոզ կարդալով բոլոր միաբանութեամբ պնտեցաք յաղօթս՝ եւ ի գիշերային հսկմունս, որ նոյն առաւօտն էր տսն երեւման սրբոյ Խաչի

կիւրակէին, թերեւս ի Հոգւոյն սրբոյ զօրութենէ, եւ շնորհիւ սրբոյ Խաչին, աղդութիւն լիցի ումեք ի մարդկանէ, զինչ մասն լինիլ ի խաչին. եւ յաւարտիլն երրորդում ժամու սրբոյ պատարագին, քննեալ հարցաք յամենեցունց, որ յոչ ումեք չէր լինչ յայտնեցեալ։ Սակայն Աւետիս Վարդապետն մեր՝ համարձակեալ եւ յուսադնտեալ ի շնորհս սրբոյ Խաչին, առեալ զսուր մի՝ սկսաւ աղօթելով եւ արտասուօք՝ բրուտութեամբ բանալ զխաչի վերին երեսի ոսկեղէն տախտակն, եւ մեր զողութեամբ հարեալ, միաբանութեամբ ըզՏէր ողորմեայս ասելով եւ զխունկս անոյշս մատուցանելով՝ աղաչեցաք զԱստուածընկալ սուրբ Նշանն, առ ի չբպատժել զանարժան ժպրհութիւնս մեր։ Իսկ նա սարսափմամբ մեծաւ կարեմ ասել հրաշիւք՝ քան թէ հնարիւք, եբաց եւ եգիտ զսարսափելին հրեշտակաց եւ մարգկան, այս ինքն՝ փոքր բակլայի միոյ չափ՝ կարմրագունեղ՝ եւ մաղ մաղ խայտանիշ՝ սուրբ մասն լինչ ի կենաց փայտէ, ի բուրմանէ անոյշ եւ յանմահական հոտոյն՝ եւ ի տեսարանէն ստուգեալ. բայց զճշմարիտն ասեմ՝ ով խաչաբարձ հոգիազարդ փափագող՝ նորագիւտ գանձին անգնոյ՝ հոգեսէր տէր վարդապետ՝ զի ոչ թուղթ՝ եւ ոչ գիր գտաք ի վերայ. այլ նկատելով զպատմութիւնս գրոց . . ., որ ի փոքրիկ նախկին բառարանի գրքոյն գրեցեալ կայ՝ որ որդիքն Սենեքարիմայ արքային՝ ընդ Պետրոս Գետադարձ Հայրապետին՝ բերեալ են այսր զԳետարդել սուրբ Նշանն եւ ի ոյն սուրբ Նշանի զեկեղեցին շինեալ՝ եւ աստ ամփոփեալ՝ անտես անլուր եւ անգիւտ ի մարդկանէ՝ թագուցեալ աստ ի յերկիւղէ գողոց՝ միայն ի նախնեաց սուրբ եկեղեցւոյս անունն՝ «սուրբ Նշանի եկեղեցի» վերակոչեցեալ. որ եւ դու ինքնինդ իսկ տեսեալ ես աչօք զգերեզմանն Գետարգել սուրբ Հայրապետին Պետրոսի աստ՝ ի դարպասի առաջի դրան եկեղեցւոյս՝ յաջմէ կողմանէ ամփոփեալ կայ։ Արդ համառօտիւ զայսքանս՝ խաչասէր խաչակրօնիդ՝ նշմարեալ ցուցաք. յորմէ եւ հայցեմք ձեզ՝ եւ մեզ՝ եւ ամենից հաւատացելոց՝ լիցի օգնական եւ պահապան. ամէն։

«Ի հերուէ սկսեալ եմք զնոյն սուրբ Նշանի եկեղեցին՝ սրբատաշ քարամբք եւ մեծավայելուչ շինել՝ եւ մինչեւ ցիսմարն հասուցեալ՝ ցուրտն վերաժամանեաց մնաց կիսակատար. եւ աղօթիւք սրբազան հօրս՝ եւ ձեր՝ յուսամ՝ յայսմ ամի Աստուծով զնաւակատիսն սրբոյ տաճարիս տեսանել՝ եւ մեռանիլ»

Ողջ լեր ի սէր Տեառն եւ

ԳԱԼՈՒՍՏ ԱՐԵՂԱՅԻՍ։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԺԸՆԵՎԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ։

Գ. Ճ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ։

1342 ԹՒԻ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ,
ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ։
(Շարունակութիւն)

«Այն ինչ էն կողմերն, ուր Հայերը կը բնակէին, փոքր ինչ հանդարտուկ էին, ճանապարհները խաղաղուել էին, նոր ի նորոյ առևտուրը բացուել էր, երկրագործութիւն սկսել էր առաջանալ, այդիքն, որ կամ թշնամեաց յարձակմանէն խորշակահար էր եղած, կամ նրանք կոտորած էին և այժմ նոր ի նորոյ սկսել էին ծառեր տնկել, և ահա յանկարծ մին անակնուելի անցք պատահեցաւ, որ կրկին խառնուեցան՝ շըփոթուեցան ու սկսեցին մեր Հայերը մին վմնի միսը ծամել՝ ուտել։ Ասեմ ինչ էր պատճառը։»

«Այն ժամանակը Հայերի առաջաւոր մարդկանց մէջը բաղմակնութիւնն սովորութիւն էր եղած, մանաւանդ պսակող քահանայքն անպատիժ մնալով, անխափեր կատեղ էնտեղ պսակում էին։ Երից-վանիկցի Գուանգիւլ կար, որ քանի մի բազմամարդ գեղեր նրան ստորագրուած էին, և ցերկու հազար զօրք կարող էր ժողովել իւր գլխին, իմանալով որ՝ Թորոս զօրավարի մեռած եղբայրը մի կարի գեղեցիկ դուստր ունի, խնամախօս է ուղարկում Թորոսի մօտ, պսակով ամուսնանայ նորա հետ։ Թորոսը շատ զայրանում է և ապըստարում որ, նա երբէք թոյլ չի տալ կատարուի էդ ամուսնութիւնն, ըստ որում Գուանգիւլն ունի մի կին պսակուած, և երկուսն էլ պահուած։ Գուանգիւլն խնամախօսի բերանով ապսպարում է թէ, դժուար չէ իւր պսակուած կինն արտաքսել կամ մի գիշեր խեղդել։ Այս ապսպարումն և էս է կատաղացնում զԹորոսը, վասնորոյ և սա կառաքէ ասել նրան թէ, եթէ այսօր էդ անելը մտադիր է, զարմանք չէ որ վաղն էլ իմ եղբօր դստերը սպանէ կամ խեղդէ կամ արտաքսէ, և կարելի է վերջն ինքը թուրքանայ էս, վասն որոյ ասէք նորան, միւս անգամ էս առարկայի վերայ խնամախօս չղրկէ, ընդհակառակն ինքն իւր ձեռովը նրան կսպանէ։»

«Այս լուրը հասնելով Պապ հօրեղբօրս, կերթայ Թորոսի տունը, բերել կըտայ նորա եղբօր դուստր Օտղիկ անուն օրիորդը, կըհանէ իւր մատնէն մատանին, կըդնէ օրիորդի մատը, ճակատէն կըհամբուրէ և կանուանէ հարսնացու իւր որդի Դատիգեարին։ Դանի մի շաբաթէն յետոյ մեծ հանդէսով, շատ բազմութեամբ, տերտերներով, տիրացուներով գնաց Թորոս զօրավարի տունը, նշանը օրհնել տուեց ու վերադարձաւ։ Ափսոս, էս հանդիսաւոր նշանադրութենէն յետոյ, փոխանակ ուրախութեամբ հարսանիք անելոյ, սրով կոծով թաղեցինք Օտղիկ օրիորդը։ Ասեմ ինչ սխուր անցք էր էս։ Նշանադրութիւնէն քանի մի շաբաթ յետոյ, Թորոսը գնում՝ Դաւիթ բեկի գեղը, և ահա լուր են բերում թէ, մահմեդականները պատրաստուած յարձակվելոց են այսօր Ճամնդուրի գեղերի վերայ։ Թորոսը չունէր արու զաւակ, և նրա բացակայութեան ժամանակը պարում որ, նա երբէք թոյլ չի տալ կատարուի էդ ամուսնութիւնն, ըստ որում Գուանգիւլն ունի մի կին պսակուած, և երկուսն էլ պահուած։ Գուանգիւլն խնամախօսի բերանով ապսպարում է թէ, դժուար չէ իւր պսակուած կինն արտաքսել կամ մի գիշեր խեղդել։ Այս ապսպարումն և էս է կատաղացնում զԹորոսը, վասնորոյ և սա կառաքէ ասել նրան թէ, եթէ այսօր էդ անելը մտադիր է, զարմանք չէ որ վաղն էլ իմ եղբօր դստերը սպանէ կամ խեղդէ կամ արտաքսէ, և կարելի է վերջն ինքը թուրքանայ էս, վասն որոյ ասէք նորան, միւս անգամ էս առարկայի վերայ խնամախօս չղրկէ, ընդհակառակն ինքն իւր ձեռովը նրան կսպանէ։»

«Այս լուրը հասնելով Պապ հօրեղբօրս, կերթայ Թորոսի տունը, բերել կըտայ նորա եղբօր դուստր Օտղիկ անուն օրիորդը, կըհանէ իւր մատնէն մատանին, կըդնէ օրիորդի մատը, ճակատէն կըհամբուրէ և կանուանէ հարսնացու իւր որդի Դատիգեարին։ Դանի մի շաբաթէն յետոյ մեծ հանդէսով, շատ բազմութեամբ, տերտերներով, տիրացուներով գնաց Թորոս զօրավարի տունը, նշանը օրհնել տուեց ու վերադարձաւ։ Ափսոս, էս հանդիսաւոր նշանադրութենէն յետոյ, փոխանակ ուրախութեամբ հարսանիք անելոյ, սրով կոծով թաղեցինք Օտղիկ օրիորդը։ Ասեմ ինչ սխուր անցք էր էս։ Նշանադրութիւնէն քանի մի շաբաթ յետոյ, Թորոսը գնում՝ Դաւիթ բեկի գեղը, և ահա լուր են բերում թէ, մահմեդականները պատրաստուած յարձակվելոց են այսօր Ճամնդուրի գեղերի վերայ։ Թորոսը չունէր արու զաւակ, և նրա բացակայութեան ժամանակը

գործերի թէ անտեսական թէ դինուորական, վերահասու կը լինէր նրա ժրաջլուխ կինը Խաթուն խանում անուն։ Սա ցլուր տանն իւր ամուսնոյն, հրաման կը դրկէ մերձ գեղերի վերայ, փութով զօրաժողով լինել դալ գնալ թշնամիների վերայ։ Մինչ այս մինչ այն՝ հարիւր ձիաւոր կը գումարուին, և առ ի իրախուսել ձիաւորները, կը ձիաւորացնէ և զՕաղիկ օրիորդը տասն և տասնեւհինգ նրա հասակակից օրիորդների հետ, որպէս զի միասին գնան, հալածեն ասպատակող թուրքերը։ Երկրորդ օրը Հայոց ձիաւորները կը պատահին թշնամեաց, որոնք արդէն ասպատակաց մի գիւղի ոչխարները և նախիրը քշում տանում կը լինին դէպի իւրեանց կողմը։ Այս տեղ պատերազմը կը սաստկանայ, երեք ժամէն աւելի կը շարունակուի նոցա մէջ մարտը, ի վերջոյ թուրքերը տեղի կտան Հայերին, կը ձգեն աւարը և կը փախչին։ Այս պատերազմի մէջը կը վերաւորուի Օաղիկ օրիորդն ուսէն հրացանի գնտակով, թէև շատ թեթև իւր ասութեամբ, բայց երբ կը վերադառնայ իւրեանց տուն, կը սկսի ջերմել, քանի մի օրէն յետոյ կը վախճանի։ Որպէս, ինչպէս շուտով անցկացան էն բարի ժամանակներն, երբ կանայք և օրիորդք ևս կը ձիաւորուէին, կը մանէին տղամարդի նըման պատերազմի ասպարէզն, թուր, սուր և հրացան կը բռնացնէին, և շատերն էլ իւրեանց ազգականների հետ կերթային, որպէս զի նոցա համար կերակուր և ուտելիք պատրաստէին, մարտի ջերմ ժամանակն հրացան և կամ ատրճանակ լցնէին, նոցա մատուցանէին, զկնի մարտի՝ վիրաւորեալները պաշտէին՝ սպեղանիք դնելով նոցա վերքերի վերայ և փոփոխելով էնդոնք և գիշերները հսկելով նոցա վերայ։ Տէր Աւետիքի կինն իւր ամուսնիցը չէր հեռանար և ժամերգութեան ժամանակն էս տէրտէրակին Բըլղաթն էր տիրացութիւն անողն։ Բըլղաթ ասելով, կարծում էք մի հասարակ կիր՞ն էր. ո՛չ, ո՛չ, նա էր որ կը խրախուսէր, կը քաջալերէր զողորիկ սուրը. մարտակից լինել, առաքինանալ, նա էր օրինակ կրօնասիրութեան՝ բարեզործութեան և պարկեշտութեան. նա էր զօրապետ իւր սեռի. նրա յիշատա՞կը յաւերժական լինի։ Այն բարի, ամենաբարի ժամանակը շատ օրիորդներ, նորահարսներ, կնանիք, լաւ ձեռնի ջուր ունեցողները, զունակ զունակ պատմուճաններ, կարովի արախչիններ, վառօղի և գնտակի ամաններ, կոճերի փաթաթոցներ (տօլաղ), շապիկ նաշխած կուրծքով և այլ հագուստներ կը կարէին, կասղագործէին և կը պարգևէին էն տղամարդին, որ պատերազմի ասպարէզումն կը դերազանցուէր քաջութեամբ։ Քանի՞ քանի՞ երիտասարդներ էս պարգևները հագած և կամ թէ մտադիր էին հագնելոյ, մարտի դաշտի վերայ դիտապաստ են ընկած։ Քանի՞ քանի՞ օրիորդներ իւրեանց նշանածները պատերազմի տաք տաք ժամանակն են ընտրած, և կամ նոյնպէս երիտասարդներն, ինչպէս ես իմ առաջուան կինս ընտրեցի Որոտնայ բերթի առնելոյ ժամանակն՝ երբ վառօղս պակասեց, հանդուցեալն երկու բուռն՝ իւր ձեռաք շինածէն պարգևեց ինձ։ Ահա՛ տեսէք՝ ի՞նչով էին պարապում էն ժամանակը կանայք։»

«Օաղիկ օրիորդը վախճանեց և խառնուեցաւ սուրբ կուսերի դասի հետ, և ուխտաղրուժ Փռանդուշն (որի անունը յաւիտեանս անէծքով ու նզովքով պէտք է յի-

շուի) որպէս անյիշաչար և անոխակալ ոք, եկաւ Թորոսի տունը զլխաողջանք, ինչպէս և միւս բոլոր երևելիքն։ Թորոսն նրա զալուստը համարեց հաշտութիւն, ուստի ընդունեց զնա և այնուհետև բարեկամութիւն՝ զնալ գալը շարունակեց՝ որպէս առաջ եղած էին, և երբ ուր ուրեք պատերազմ լինէր, միասին ևս կերթային։»

«Յանկարծ լուր տարածուեց թէ Ֆաթ-Ալի խանը զօրաժողով է լինում, յարձակուի Զավընդուրի վերայ։ Թոլորեքեան հիացան նրա էս յանդգնութեան վերայ, որովհետև նա շատ անգամ յաղթուած էր Թորոս զօրավարէն և կարծում էին ընկճուած է։ Մի ասիլ՝ էս լինում է զրդմամբ և խորհրդով Ֆռանգիւլի, ինչպէս շուտով կերևայ։»

«Թորոսն ստուգելով Ֆաթ-Ալիի յարձակումն, իմացումն է տալիս դաւաճան Ֆռանգիւլին, որ և շուտով ներկայանում է իւր զօրքովը։ Երկու օր երկու կողմի զօրքն էլ միմեանց դէմ ու դէմ բանակուած մնում են, և հաշտութեան խօսքի միջնորդ է լինում Ֆռանգիւլին, որի նպատակն եղած է միմիայն յետ ձգէ մարտը, մինչև Երասխի միւս կողմէն Ազլաբեանի ցեղէն վարձած հեծելազօրը զայ հանի Ֆաթ-Ալիին օգնութիւն։»

«Հաշտութիւնը զլուխ չգալոյ համար՝ երրորդ օրը մարտը սկսում է, Հայերը սաստիկ հարուած տալով թշնամեաց, յաղթում են և հալածում, Թորոսն էլ յաղթութիւնը կատարեալ համարելով՝ և ևս կրկրախուսէ զհետ պնդելնոցա, բայց յանկարծ կը հասնին նոցա օգնական Ազլաբեանցիք, կրվերադառնան միասին, մարտը կընորոգուի առաջինէն սաստիկ, մռմուած՝ դաղանացած մին զմինի վերայ յարձակուելով։ Մարտի տաք-տաք ժամանակն ուխտադրուժ Ֆռանգիւլն դասալիք լինելով, իւր զօրքովը կը քաշուի հեռի կրկանդնի՝ որպէս հանդիսատես և անտարբեր փոքր ինչ կընայէ, կընայէ ու կը հրամայէ իւր զօրքին վերադառնալ իւրեանց տեղերն։, իսկ ինքն քսան-երեսնաչափ ձիաւորներով կերթայ կը խառնուի Ֆաթ-Ալիի զօրքին։»

«Մարտը մինչև արևմուտը կը շարունակուի, երկու կողմէն էլ շատ տղամարդիկ գետնի վերայ անշունչ մնալով։ Թորոսն քանի մի մահացու թուրի վերքեր ստանալով, դարձեալ չի ընկճուիլ, բայց ի վերջոյ կուրծքի մէջ տեղը հրացանի գնտակով հարուած ընկալնելով, սուրը ձեռքին երիվարի վրայէն զգետնի կը հարկանուի՝ և իսկ և իսկ հոգին կաւանդէ, որի դիակն իւր աջակիցները կաշխատին դուրս բերել մարտի ասպարիզէն և չթողուլ անհաւատների ձեռքին։ Էս նահատակի դիակի վերայ հարիւրաւոր մարդիկ երկու կողմէն կը սպանուին, բայց ի վերջոյ Հայերը կաղատեն զայն։ Շատ ականատեսներ կապացուցանէին որ, հաւատուրաց Ֆռանգիւլի ազգականներէն մինն է ձգած Թորոսի վերայ գնտակն և նոյն դաւաճանը սպանուել է իսկ և իսկ գնտակով։ Հայերը տեսնելով իւրեանց զօրավարի անկանիլն, սկսել են փախչիլ, ցրուիլ՝ երբ և թշնամիքն աւելի ևս սաստիկ կոտորած են տուել. եթէ գիշերը չէր վրայ հասած, և ևս հարուած կը ստանային, այսու ամենայնիւ դարձեալ մինչև երկու հազար մարդ կորցրել են, իսկ թշնամեաց կողմէն կորուստն կրկնակի է եղած։»

«Ֆռանգիւլը չբաւականանալով էսքան չարութեամբն, երրորդ օրն իւր լոյս հաւատն

ուրացան, ընդունեց մահմեդականութիւնը։ Իսկ նրա դրդմամբ Ֆաթ-Ալիի զօրքը, մանաւանդ անզուսպ Զալաբեանցիք ապստամբեցին Զամբդուրի դեղերն՝ որքան և կարողացան, մինչև հրամանաւ Դաւիթ բէկի փութացան, հասան Մխիթար զօրավարն և Տէր Աւետիքը զօրքով, որոնք այս տեղ այն տեղ մանր-մունր պատերազմներով վերստին արտաքսեցին հալածեցին Զամբդուրէն։ Թէև առժամանակ այնուհետև երկու կողմէն ոչ ինչ խրլրտմունք չէին լինում, բայց սաստիկ պատրաստութիւններ էին տեսնում մեր չորս կողմի այլազգիներէն։ Դաւիթ բէկը իւր բանակովը սպասում էր Դարալակեազ, այն տեղրանքի վայրենի ցեղերի յարձակման առաջը կորել, որովհետև լուր կար թէ նոքա ևս ժողովւում են դալ, ասպատակել Հայերի գիւղերը։ Ֆռանգիւլը, հաւատարիմ Ֆռանգիւլն էլ քսութիւնով և վատ լուրերով աւելի ևս էր վնասում, այս ինքն վկայացնող սպասարանքներ և լուրեր տարածելով իւր արբանեակների բերանով միամիտ Հայ-գեղացիների մէջը, նոցա սիրտը սառնացնել էր տալիս, որպէս թէ Ռուսը յաղթուած Պարսիկներէն։ Դարձեալ քաղաքէն վերադարձել է, և Շահ-Թամազն եկած է Թավրէզ մեծ բանակով և էս օրէ-վարն՝ գալոց է գ Հայերը ջնջել։ իսկ Օսմանցին հասել է շատ զօրքով Կարս և Երևան, շարժումէ Հայերիդ վերայ, և դուք Հայերդ մի բուռն ժողովուրդ, ինչ կարող էք անել էս երկու հզօր տէրութեան զօրքի առաջև, մանաւանդ ձեզ շրջապատող Թուրքերը ձեզ ընտանի թշնամի են, շուտով ձեր կնանիքն, աղջկերքն, որդիքը գերի կրտանին Թավրիզ հրապարակներումը կրվաճառեն։ ձեր Հայ-զօրավարները ձեր արիւնը թափելով, իւրեանց համար փառք ու պատիւ են ձարում, մինչև ցայսօր էնքան արիւններ թափուեցան, ինչ օգուտ եղաւ ձեզ։ Ռուսը դանձ, վառօդ, արձիձ, հրացան և այլն և այլն զրկեց, որն արդեօք ձեզ ցոյց տուին։ Վրաց թագաւորը ձեզ մեծ մեծ խոստացաւ, վերջն ինչ եղաւ։ սարի էն կողմի մելիքները ձեզ ոչ ինչ օգնութիւն ցոյց չտուին ևն։ Եւ ահա այսպէս էն Ցուղայ-մատնրչէ ամբարիշտ խօսքերը սերմանւում էին միամիտ Հայերի մտքումը և խոր արմատ ձգելով նրանց սրտումը, օր ըստ օրէ վհատւում էին ու յուսահատւում, որի հետևանքն էր չարաչար երկպառակութիւնն։

«Թորոսի սպանուելէն յետոյ շատերը դլուխ բարձրացրին նրա տեղն և պաշտօնի համար, բայց Դաւիթ բէկն ու զօրավարները բարեոք համարեցին նրա զօրավարութեան պաշտօնը յանձնելոյ Հանդուցելոյ տէրի ևս լաւ ասած, նահատակելոյ հօրեղբօր որդի Նուբարին, որի պասն էլ Զամբդուրի գլխաւոր մելիքն էր եղած ժամանակով, և մանաւանդ ինքն Նուբարը յայտնի էր իւր քաջութեամբն ու տղամարդութեամբն և շատ պատերազմի մէջ առաքինացած էր իւր նահատակեալ ազգականի հետ։ Մեծ հանդիսով կատարուեցաւ Նուբարի զօրավարութեան կոչումն տալոյ օրը։ Տաթևու առաջնորդը, վարդապետները, քահանայք, երևելի իշխանները, զօրավարների հետ ներկայ էին, մեծ հացկերութիւն տուեց։ Նուբարն ոչ միայն վերոյիշելոց, այլև բոլոր ժողովուրդին, որոնք եկած էին շնորհաւորելոյ։ Երեք օր երեք գիշեր փող, թմբուկ, լարախաղաց,

զօանմարտիկներ, ձիաքաղաց հեծեալներ, զարդարում էին էն հանդէսը։»

«Նուբարը վատ ժամանակում էն պաշտօնը ստացաւ, որովհետև Թորոսի հետ շատ քաջ տղամարդիկ էին նահատակուած և դժուարին էր նոցա տեղը լցնել և զօրքին յուսահատուած և վհատուած էր համարեա։ միւս կողմէն էլ Զաւընդուրի գեղերի բնակիչներն ըստ մեծի մասին ցրուած, դաղթուած էին ամուր տեղեր, և Նուբարն աշխատում էր նրանց փոքր առ փոքր ժողովում, վերադարձնում իւրեանց տեղերն, ոմանց դրամ վճարելով արմտիք գնեն, ոմանց իսկ արմտիք բաշխելով, ոմանց անասուններ և ոմանց քաջալերութիւն մատուցանելով։ Էն ժամանակը դեռ էս համաձայնութեան հոգին թաղաւորում էր Հայերի մէջն, այս ինքն ինչ ժամանակ թշնամեաց յառնելոյ կամ յարձակուելոյ լուրը կլսեցին, կամ եկեղեցւոյ կոչնակը կլսուէր, կամ գեղը գեղի մէջին ձայն կլսար թէ, դուրս եկէք՝ թշնամիք են գալիս, կամ թէ պատրաստուեցէք այս ինչ ժամին, օրին դուրս գաք գընալ թշնամեաց վերայ, իսկ և իսկ Հայ մարդը կրթողնէր իւր գործը, կըլսահարուէր, կըփոխեար, կըներկայանար առանուտիրոջ տան առաջին կարձանանար։ Մէջերնուն չկար խարութիւն թէ միամիտ որպի է, պատանի է, երիտասարդ է թէ ծեր։ Շատ անգամ թէ չանէք միշտ, կընանիքն, օրիորդները նրանց կըդրահարուէին, կըքաջալերէին շատակ՝ յայտնուիլ ուր նշանակուած է, և ուղեկից էլ կըլինէին նոցա, որպէս պատմեցի։ Ինչ երիտասարդ պատերազմ չէր մտած, նրան ոչ ոք օրիորդ չէր համաձայնուիլ ընտրել ինքեան ամուսին։ Ահա այսպէս, գեղ-գեղ խումբ-խումբ կըհամագումարուէին կը գային իւրեանց զօրավարի տան առաջին, ուստի և կըշուէին բանակով ուրախ ուրախ, երգով, փնջով, խմբակով գէպի պատերազմի ասպարէզն։ Էն էս չմոռանամ ասել որ, մեր քահանայքը զգեստաւորուած, խաչ-խաչվառով կը յայտնուէին բանակի առաջին, նախ քան գնալն, և նոյն իսկ պատերազմը սկսելոյ ժամանակը, կըքարոզէին զօրքին՝ նոցա համար երկնքումն պատրաստուած արքայութիւնը թէ նահատակուին, անանց կեանքը, աշխարհիս ունայնութիւնը, նոցա հօր, պապերի, եղբայրների, ազգականների քաջութիւններն և նոցա անունները զրուիլն ի թիւս մարտիրոսաց և այլն և այլն։»

«Մինչ այս մինչ այն՝ Ֆաթ-Ալի խանը Գուանզիւլի դրդմամբ մտադիր էր յանկարծ յարձակուիլ Զաւընդուրի վերայ, ի նկատի ունենալով Նուբարի նոր պաշտօնն և նրա անհմուտ լինելը զօրավարութեան կամ նորա ստորադրելոյ երկպառակութիւնն, զոր ինքն Գուանզիւլն էր ցանած։»

«Արդարև նա չէր սխալուած։ Նուբարը չսելով Ֆաթ-Ալիի պատրաստութիւնն, և որպէս ասացի, իւր ստորադրելոյ լաւ լաւ տղամարդիկն արդէն նահատակուած էին և կենդանեայ մէջին յարմար տղամարդ սակաւ լինելոյ համար՝ մարդ ղրկեց Հօրեղբօրս մօտն և խնդրեց շուտով ինքեան օգնութիւն հասցնել և նոցա գլխաւոր կարգել մի հինօրեայ՝ փորձուած տղամարդ։ Հօրեղբայրս շտապով ոտքան և կարողացաւ՝ զօրաժողով եղաւ, յանձնեց Մելիք Մանուչարի Թոռն Մանուչարին և քաջ տղամարդ Բահրամին, որպէս զի գնան միա-

նան Նուբարի հետ։ Սոքա քանի մի շաբաթ Զավընդուրի սահմաններումն սպասելով, թափառելով լերանց ձորերի մէջին, ոչ ոք թշնամի չեն տեսնում, որովհետև Ֆաթ-Ալին իմանալով Ֆայերի միանալն և դիմադրաւ լինելն, կասել էր իւր նպատակէն։ Մանուչարն ուրքան և քաջ էր, այնքան էլ վատալեղու և խռովասէր էր։ Սա երիտասարդ Բահրամի սիրան ուռերում է զինի զանազան ամբաստանութիւններ և յանցանքներ բարդելոյ հօրեղբօրս վերայ, ի վերջոյ ասում, որ տեղ Պապն աւարի և ասպատակի յոյս կայ՝ ինքը կերթայ, ուր չկայ՝ մեզ կառաքէ, ուստի այսպէս զօրքով գնանք նորա դրանը իջնենք, պահանջենք որ մեզ վարձատրէ, ապա թէ ոչ՝ ինչպէս հարին է՝ նրա հետ այնպէս կռավարուինք, մեք նրա գերին չենք, նրա ձորոը չենք՝ որ ամենայն դատարկ բանի համար մեզ գործ ածէ, ինչի՞ նա պէտք է էնքան հարուստ լինի, և մեք ոչ։ Դու էս խօսելէն կրծադէ ի վերջոյ այն, որ յարձակուին նորա ջոկի և հօտերի վերայ ու յափշտակեն. բայց ոմանք լաղք, կասեն, գնանք նորա դուռը, թէ չվարձատրէ զմեզ, այնուհետև ձեռնամուխ լինինք էդպիսի յափշտակութեան։ Էս ասուլեան կրտաբածուի զօրաց մէջն, և մինը մեր ազգականներէն ձի կրհեծնի, լռեցայն կրհասնի Դաւիթ բէկին կրհաղորդէ։ Սա նախ հաւատ չի ընծայիլ, բայց իբրև Պապ հօրեղբայրս էս լսելով՝ առաքեց զիս Դաւիթ բէկի մօտ, էն ժամանակը հրամայեց Գէորգի բէգ զօրավարին հարիւրաւոր ձիաւորով շտապել, հասանել Մանուչարին ու Բահրամին, արգելել կատարեն իւրեանց չար նպատակն և շուտով ցրուեն զօրքն։ Գէորգին յորդորելով զՄանուչարն ու Բահրամը, զօրքը ցրուելէն յետոյ, առաջնորդեց նոցա Մանլեվ մեր գիւղը, հաշտացրեց նոցա հօրեղբօրս հետ, հանդցրեց էս խռովութեան կրակն, թէև առժամանակ միայն։ Էս երկպառակութեանց սերմանողն էր դարձեալ հաւատուրաց Ֆուանդիւլն, որ միշտ դուն էր գործում. կռուացնել զօրավարները մին զմինի հետ, յարուցանել ընտանեկան տարաձայնութիւններ, յորմէ կընկճուէր և Դաւիթ բէկն, և այնուհետև ինքն շուտով կարող էր Զավընդուրի և Կենաւուզի իշխանութիւնը ձեռք բերել, ինչպէս և Ֆաթ-Ալի խանը խոստացած էր նրան օգնել։»

«Բահրամը հեռի — մօտիկ ազգական դալով Ֆուանդիւլին, և Մանուչարն էլ խնամութիւն ունենալով նրա հետ, ծածկաբար քուռ յարակցութիւն է ունենում նոցա հետ և միշտ յորդորում հեռանալ Ֆայոց զօրախումբէն և միաբանութենէն, ըստ որում Թուրքերը շուտով կրփչացնեն և կոչընչացնեն զՖայերը. վասնորոյ լաւ է այժմէն ինքեանց հաւատարիմ ներկայացնեն չորս կողմի զօրեղ Թուրք իշխողներէն. եթէ էս չկամենան, գոնէ չմրցանեն միւս զօրավարների հետ մարտի ասպարէզն, այլ չեզոքութիւնը պահպանեն։ Ահա գլխաւոր պատճառն, որ թէև միմիանց հետ Ֆայերը արտաքուստ հաշտ էին, բայց կերևար որ մին սառնութիւն կար նոցա մէջն՝ երբ մին զմինի կրպատահէին, և առաջուան նման մին զմինի մօտ շատ չէին յաճախել։»

«Ճշմարիտ է՝ Մանուչարն և Բահրամն հաշտուեցան հօրեղբօրս հետ, որ միմիամենապատուական նժոյգներ պարգևեց նոցա,

այսու ամենայնիւ Գուանդիւլի արքանեակները ծածկաբար անընդհատ գնալ դալ ունէին նոցա մօտ, որպէս թէ ազգականներ են։ Հօրեղբայրս անցեալն և ներկայն զիտէր և պատմած էր մի ըստ միոջէ Գէորգուն, որպէս զի սա հաղորդէ Դաւիթ բէկին և խնդրէ շուտով հեռացնէ յինքենէ ու ուղարկէ զնոսա քանի մի հարիւրական զօրքով ուրիշ տեղ, ուրիշ զօրավարի հրամանի ներքոյ լինին, բայց Գէորգին կարծելով հօրեղբօրս ասածներն ի թշնամութենէ է կամ թէ բարուրանք են, և որպէս թէ քսութիւն չլինի իւր կողմէն, ոչ ինչ համարելով էնդունք և էր հաղորդած Դաւիթ բէկին, ուստի Պապ հօրեղբայրս ինքն գնաց Դաւիթ բէկին տեսութեան և մի ըստ միոջէ պատմեց, թէև Դաւիթ բէկն լսեց, բայց ոչ ինչ ուշադրութիւն չդարձրեց նոցա վերայ։ Պատճառքն մեզ էն ժամանակն անյայտ էին, բայց հետզհետէ յայտնի եղան։»

«Գուանդիւլն չէր մոռանում՝ ինչպէս Հայերի զօրավարներն։ Նա չունէր հանգստութիւն, ամենայն օր նոր նոր փորձեր էր փորձում։ Տեսաւ իւր խորամանկութիւններն փութով չեն բարդաւանում, ձեռնամուխ եղաւ այլ հնարքի, քաջալերել Ուրդվարի խանը, զօրաժողով լինել՝ յարձակուիլ Կենաւուղի վերայ, և յանելով նոցա թէ Գաթ-Ալին ևս՝ և այլք պատրաստ են հետևել նրան ու մի անգամով վերջ տալ Հայերի ապստամբութեանն։ Հօրեղբայրս լսելով էս լուրն, ապսպարեց, Կենաւուղի գեղերի բնակիչները փութան, գաղթուին Խաչ—բօլու լերանց լանջերի, ծործորների և ամուր տեղերի վերայ առ ժամանակ մնան, և ինքն գնաց թշնամեաց յարձակմանը դիմադրաւ լինել, թոյլ չտալ նոքա միանան։ Մի և նոյն ժամանակը լուր առաքեց Զավընդուր, որպէս զի այն տեղի զօրքն էլ ձեպեն գան ինքեան օգնութիւն։»

«Էս անդամն, որպէս զօրաժողով լինելիս, նոյնպէս չուելոյ ժամանակն, ակն յայտնի նշմարւում էր, որ չկայ զօրքի մէջին առաջուան ջերմեռանդութեան և քաջութեան հոգին, մանաւանդ միաբանութեան։ Այսու ամենայնիւ երբ հասանք Արանկեաղ լերան ստորոտը, տեսանք թշնամիքն արդէն բարձրանում են սարի կողքը, մեք ևս նոցանէ սակաւաթիւ լինելով, մանաւանդ նոքա մեզանէ բարձր տեղ ունենալով, Պապը չհամարձակուեցաւ յարձակուիլ նոցա վերայ, թէ և ոմանք խորհուրդ էին տենում խլրտիլ։ Թշնամիքն ընտրելով ինքեանց յարմար և ամուր տեղ՝ բանակուեցան, իսկ մեք վերադարձանք, փոքր ինչ նոցանէ հեռի որոնեցինք, նոյնպէս ամուր տեղում բանակուեցանք, սպասել օգնական յեռապահ զօրքին, կարծելով թէ նոքա շուտով կգան։ Երևում էր որ՝ թշնամիքը չէին հաւատացած, որ մեք երկիւղէն չենք յարձակում նոցա վերայ, այլ խորամանկութեամբ նոցա խաբել կամիմք, ուստի զգուշութեամբ ինքեանց պահպանողական դիրքով՝ երկու օրէն յետոյ մեր աչքի առաջևն հանդարտութեամբ և կարգով բարձրացան լեռն՝ շուռ եկան ու գնացին։ Մեք ևս վերադարձանք մեր տեղը, կարծելով թշնամիքը չեն այնուհետև յարձակուիլ։ Ընդ հակառակը մին շաբաթէն յետոյ յանկարծ մերձ տասն հազար թշնամիք թափուեցան Կենաւուղի վերայ, շատ գեղերի դատարկ տներ կրծանեցին, աւերեցին, դարաններ բացան, ինչ կար չկար՝

աւաբ ասին, ափուսեցան էս կոզմն էն կոզմն, ինչոր գտնում էին յամփշտակում էին, և քանի մի սատանական մարդիկ էլ կոտորեցին։ Երբ սապատակոզները վերադառնալոյ վերայ էին, լսեցինք որ՝ Դաւիթ բէկը քանի մի հազար մարդով հասել է Դաշտուն գեղն, և թշնամիքն էն լուրի վերայ՝ աւելի Լաչեպով փութացան, վերադարձան Ուրդվար։»

«Հօրեղբայրս չգնաց Դաշտուն Դաւիթ բէկին տեսնելոյ, որոյ պատճառն էր այս։ Ինչ Թորոսը կենդանի էր, Դաւիթ բէկի ու Պապի մէջն ոչ ինչ նշան սաստութեան չկար, և զօրավարութեան կոչման անցքը մոռացուած էր, որպէս թէ երբէք եղած էս չէր։ Դայց Թորոսի սպանուելէն յետոյ լուրում էր որ, Դաւիթը երբեմն որպէս տրտունջ, երբէմն որպէս բամբասանք, երբեմն որպէս անբաւականութիւն գաղտնի կրնօսէր հօրեղբօրս վերայ մեծ զօրավարների մօտը, և հօրեղբայրս խսկով կրնդէր։ Դակ վերոյիշեալ Ուրդվարի գօրքին հօրեղբօրս պատահելէն և չպատերազմելէն յետոյ, ինչպէս շատերը լուր կը բերէին թէ, Դաւիթ բէկը հրապարակաւ յանցաւոր կը համարէ զնա և քամահէն դայրացած կը հայհոյէր, որպէս թէ նա էս ծածկարար խորհրդակից է Փռանդիւլի հետ, և թէ՝ ինքն ահէն չէն գնում միանայ Պապի հետ, չլինի թէ և ինքեան Թորոսի նման Պապը հետէ ու սպանել տայ մարտի ասպարէզումն։ Դսպէսի յայտնի հրապարակաւ անիրաւացի դատափետեն նորա զհօրեղբայրն՝ ասիլի սուին չար լեզուներին բարուրանքներ բարդել նրա վերայ ու հաղորդել Դաւիթ բէկին, որ և առանց հիմնաւոր ապացուցութեան հաւատ էր ընծայել և յումպէտս մահացուցանել մին քաջ զաղամարդ՝ ինչպէս էր հօրեղբայրս, անարդարութիւն էր։»

«Էս օրերն էր, այն ինչ հաւատարուժ Փռանդիւլն չարաչար սպանուեցաւ իւր նոր կրօնակիցներէն ու նրա հոգին դժոխքի կերակուր եղաւ յաւիտեան, ամէն, ամէն։»

«Դանի մի ամիս անցած էր՝ այն ինչ Դաւիթ բէկն ու հօրեղբայրս մին զմինը էին տեսած, և ահա մի օր լուր բերին թէ Դաւիթն մեծ բարմութեամբ գալիս է այցելութիւն հօրեղբօրս, որ ինքած էր Վալեր ասած գեղումն։ Պապն ամաչելէն, թէ նա որ յինքենէ մեծ է, էնպիսի մարդավարութիւն է անում, պարտաւոր է և ինքն իւր խոնարհութիւնն և անձնամատոյց լինելն ապացուցանել, վասն որոյ հետևակ դուրս եկաւ ընդ առաջ գնաց երկու ասպարիզաչափ ուղի բացակայութեամբ, հլութեամբ ընդունեց, ընկաւ նորա ձիու առաջն, առաջնորդեց, բերաւ հասցրեց մինչև գեղն իւր տունն։ Դաւիթ բէկն երկու օր մնալով անդ, միշտ ինքեան անկեղծ և համբոյր ցոյց տալով, ստիպեց հօրեղբօրս իւրեան հետ ձիաւորվի, գնայ Խաչբօլու՝ ժողովուրդը վերադարձնելոյ, բերէ հասցնէ իւրեանց գեղերը՝ տեղերը։ Հօրեղբայրս հաւատալով նորա անսրբաչարութեանը, գնաց քանի մի ձիաւորներով։ Երկրորդ օրը մեր մարդիկներն մինը լեղապատառ դուժաբեր եկաւ թէ հօրեղբայրդ Պապը սպանուեցաւ Դաւիթ բէկի հրամանաւ, և դու էլ գլուխդ շուտով ազատէ, ապա թէ ոչ՝ քո կեանքն էլ վտանգի է ենթարկուած։ Ես էս իսկ և իսկ միայն երեք ձիաւորով դուրս եկի սանէն, ծպտեալ՝ ձորերով՝ սարերով փա-

խած գնացի Ուրդվար, անտի Ստամպատ Մելիք Օտտուրի տունն, որ մեզ աղդական էր։ Մելիք Օտտուրն էր էն ժամանակուան Հայերի երևելեաց առաջինն ոչ թէ զէնքով, այլ փարթամութեամբ։ Սորա հարստութեան վերայ կըպատմէին թէ՝ իրը ամենայն առաւօտ, երբ նա քնէն կըզարթի, կէս լեռը ոսկի իւր բարձի տակէն վեր կառնէ, և էս ոսկի վերառնելոյ մասին էսպէս կըճառէին։ Երբ Օտտուրը պատանի է լինում, դեռ էս հօր կենդանութեան ժամանակը, Հնդկաստանէն մի Դէվրիշ է գալիս նոցա տանը իջնում, մնալով անդ մի տարի, ոչ ոք չէ հարցնում նրանէ ով է նա, ուստի է գալիս և ուր է գնալոց, բայց ամենայն օր երկու անգամ առատութեամբ և զանազան խորտիկներով այս ինքն ճաշ և ընթրիք են մատուցանում։ Դէվրիշը պարտաւորուած էս հիւրընկալութենէն, սովորցնում է պատանի Օտտուրին քիմիայ, ոսկի շինելն, պայմանաւ որ ամենայն պանդուխտ և օտար նրա տանն էնպէս ասպնջականութիւն և հիւրընկալութիւն որպէս ինքն գտնէ։ Էհա էն օրէն Օտտուրը մթերում է անբաւ հարստութիւն, մի և նոյն ժամանակն և կատարում է Դէվրիշի կտակն։ Էս իջած էր նորա տանն որպէս աղդական, բայց անընդհատ կըլինէին հիւրեր քսան մարդէն ասելն, բոլորի համար էլ միակերպ ճաշ և ընթրիք կըդար նորա խոհարանէն։ Կային էնպիսի հիւրեր, որք չորս տարիէ հետէ կմնային անդ, և ոչ ոք ունէր իրաւունք հարցնել ումիք ուստի դայ և ուր գնայ և կամ երբ մտադիր է գնալ անտի։ Ա՛չ միայն ուտելիք կըմատակարարէին հիւրերին, այլ և նոցա շորերը կըլուանային և շատերին Մելիքը շորեր կըպարդևէր, և ոմանց էլ գնալոյ ժամանակը ձի, ջորի, սուանակ և ուղտ էս կըտար։ Մի անդամայն ասաց՝ նրա դուռը բաց էր անդանդաղանապէս ամեն մարդի համար որ ադէկ կամ կրօնէն և լինէր։ Դանի մի ձեռք էնպիսի ապարանքներ ունէր, ուր եթէ Շահն էս հիւր դար իւր պալատականներովը։ Մելիք Օտտուրը կընդունէր առանց ամաչելոյ։ Կասէին թէ մերձ երկու հարիւր ձեռք անկողին ունի հիւրերի համար միայն։»

«Մելիք Օտտուրն երկու անդամ միջնորդութեան նամակ գրեց իւր մարդկանց ձեռօքը Դաւիթ բէկին, որ զկնի մեր հօտերը՝ ջոկը՝ նախիրները դրաւելէն, հազիւ թոյլ տուեց մօրս, հօրեղբօրս կինը և ընտանիքն գաղթուին դան Ստամպատ, ուր կացայ ցտան և հինգ տարի, շնորհիւ Մելիք Օտտուրի օր ըստ օրէ հարստանալով։ Մինչև որ որպէս Դաւիթ բէկին, նոյնպէս նրա ստորադրեալներն, որոնք անհաշտելի թշնամի էին մեր դերդաստանին, կամ սպանուեցան կամ թէ մեռան և կամ ցրուեցան։ Լեռոյ եր էս վերադարձայ ընտանեօքն իմ հայրենական ժառանգութիւնս տիրել, բայց այն երկար միջոց բացակայութեան ժամանակն անցած էին էնդունք ձեռէ ձեռ, վանորոյ մեզ ենթ ադրեալ ժողովուրդը կամ նոցա սերունդը կամ չկամեցան կամ յերկիւղէն մեր թշնամեաց՝ ճանաչեցին զիս, ուստի և ես եկի այս գիւղումը բնակութիւն կալայ, ուր կամ զաւակներովս՝ թոռներովս՝ ծոռներովս ամենայն կատարեալ բախտաւորութեամբ մինչև ցայսօր։»

Մի այնակեացն էստեղ վերջացրեց կարդալն իւր յիշատակարանը կամ լաւ էս

ասած, Սրապիոն ծերի աւանդած պատմութեան սեն, և քանի մի բովպէ լռելէն յետոյ կցեց, ալէսք է ասեմ քեզ որդեակ, որ էն Սրապիոն ծերն և ես շատ շատ անցքեր կըպատմէր ինձ, զորս մտադիր էի հետզհետէ նորան կրկնել տալ ու շարունակ գրէի և ապա կարդի բերէի ինչպէս պատմութիւն, բայց իմ դուրս գալս անտի յանկարծ պատահեց, ինչպէս շուտով ունիմ պատմել քեզ, վասն որոյ չկարողացայ կատարել զայն և մնաց որ մնաց մինչև ցայսօր, մոռանալով չգրածներս։ Այժմ, որդեակ, վերադառնամ ասել կիսատ թողած իմ զլխին պատահած անցքերը։

Հաբաթը մի կամ երկու անգամ կերթայի վանքն եպիսկոպոսի մօտ, մի երկու ժամ նրա մօտ նստէի ես յետոյ՝ կըվերադառնայի Սրապիոն ծերի, կամ թէ ինչպէս նրան կանուանէին, պապի մօտը, միշտ կասկածելով թէ՝ չլինի յանկարծ թուրքեր զան, տեսնեն զիս եպիսկոպոսի խցումը, ճանաչեն, ըստ որում նոցանէ, որպէս կասէին, յաճախ դնացող դացող էր լինում վանքն։ Մրքան օրէ օր Հուշի բերթէն եկողները կըհաստատէին Հահի սպանուիլը, նորա զօրքի ցրուիլն, այնքան էլ եպիսկոպոսն աւելի ես հաւատ ընծայելով իմ ասածներին, աւելի ես կառաւելացնէր յարգանքը դէպ առ իս, և շատ քիչ կը պատահէր որ, նորա խուցէն դուրս գալիս՝ մի որ և իցէ՝ գոնէ դուզնաքեայ մի իր՝ նա չպարգևէր ինձ։ Ա՛չ ինչ որ չունենար, գոնէ Թաշկինակս չոր մրքով կրլքցնէր կը տար ինձ, ասելով, էս տար Սրապիոն պապի երեխեքանց համար։

Մի օր կէս օրի մօտ էր, լուր բերին թէ՝ մի հայախօս Երախլի Հահի զօրքէն փախած, կողոպտուած, վիրաւորուած, անթամբ երիվարի վերայ հեծած, վանքի ճանապարհը հարցնելով, գեղի մէջէն անցկացաւ գնաց վանքը։ Սրապիոնը ստիպեց զիս փութալ գնալ տեսնել նոր եկողը, համբաւներ իմանալ նրանէ և վերադառնալ հաղորդել ինքեան։ Բայց ես յամառեցայ, տանէն անգամ դուրս չեկի, որովհետև սրբբազան առաջնորդի ասածներն ականջումն պահած էի՝ թէ չլինի այն եկողը ծանօթ կամ լրտես և կամ թշնամի ոք լինի, տեսնէ զիս ու ճանաչէ, յորմէ և վանքին վնաս ծագի, թէև քաջ գիտէի որ մեր բանակի մէջէն հայախօս ոք չկար, բաց ի քանի մի թնդանօթաձիգներէ, զորս չէին կարող թշնամիքը վերաւորել կամ կողոպտել՝ մինչև չելէին նոցանէ թնդանօթներն, և էս էլ դժուարին և անկարելի էր։

Էս տեղ ես ընդմիջեցի միայնակեցի զրոյցն ու հարցրի ոյք էին և ինչ թնդանօթաձիգ հայերի անուններն, և կամ որ տեղացի էին։ Նա պատասխանեց, Խսայ խան և Ծատուր բէկ Ռուշերցիք, Մանուչար բէկ Հիրազցի, Սայիդ բէկ, Ռօստոմ բէկ և Յարթիւն բէկ Խսպահանցիք, Նօնոշ բէկ, Յոսի բէկ և Կարաբէկ Վրաստանի կողմի Հայեր։

Էն լուրի վերայ, շարունակեց միայնակեացն, էն լուրի վերայ՝ ձիդ միջոց ես սրբտում և տարտամ նստեցի, նստեցի և ապա անհամբերութենէս սկսեցի տուն ու դուրս անել, չէի կարողանար հանդստանալ, մինչև և ահա եպիսկոպոսի տիրացուն յայտնուեցաւ կիսաշունչ և կցկտուր բառերով հարցրեց ինձանէ, արդեօք Յովսէփ անուն ծառայ ունեցած եմ բանակի մէջէն, և թէ՝ արդեօք նա Հայ է թէ Թուրք։ Յովսէփի անունը

լսելէս՝ ինձ ես կորցրի, թուքս բերանումս չորացաւ, ընդարմացայ մնացի, լեզուս կարկամեցաւ, չկարողացայ պատասխանել։ Տիրացուն թէև ապշած՝ նայեց, նայեց, բայց մի և նոյն հարցն քանի՛ մի անգամ և ես կրկնեց։ Քանի՛ մի բովէ անցնելէն յետոյ, ես անզգայաբար՝ միայն՝ միմիայն բառս Յովսէփ, Յովսէփ կրկնէի, որպէս յետոյ ինձ պատմեցին։ Ի վերջոյ որպէս թէ տիրացուի ստէպ ստէպ հարցնելէն՝ կարողացել եմ արտասանել, այո։ Տիրացուն վերակրկնել է հարցն թէ, նա՝ այ է արդեօք, և ես գլխով նշանացի արած լինիմ, այո՛ այ է։ Բայքան միայն մտիս է, որ տիրացուն փութով դուրս թռաւ սենեակէն, վերադարձաւ, աներևոյթ եղաւ։ Փոքր փոքր ուշի եկայ, և այնուհետև օրքան և կրմտածէի, ոչ ինչ եզրակացութիւն չէի կարող տալ էն անակնկալ դէպքին։ Որպէս Սրապիոն ծերն՝ նոյնպէս և որոնք ներկայ էին, զուն կըզորձէին քաջալերել զիս, բայց մտայուզութիւնն էնպէս էր տիրել զիս, որ ոչ ինչ մխիթարութիւն՝ յոյս՝ քաջալերութիւն չէին ներզորձել հոգւոյս և մտացս վերայ։

Երեկոյեան պահ էր և ահա յայտնուեցաւ մի և նոյն տիրացուն, քամակն էլ իւծեալ՝ ընկճեալ՝ հիւանդոտ և զուսնատ Յովսէփս, անգին Յովսէփս։ Կարող ես երևակայել որդի՛, օրքան ուրախութեամբ թէ տրտմութեամբ, չգիտեմ, լցուեցաւ սիրտս՝ երբ տեսի նրան էն դառն վիճակի մէջին, իսկ նա արտասուախառն աչերով, զետնատարած ընկաւ առաջիս ոտներովս փարելով, խա՛ն, խա՛ն բառս էր միայն հեկեկալով արտաբերում։ Մի՛թէ ես կարող էի էն բովէին զսպել զիս, չարտասուել,— քա՛ւ լեցի։— ես մոռացայ ոչ էր մեղանէ մեծն և ոչ փոքրն, ոչ տէրն և ոչ ծառայն։ Իսկ և իսկ յարուցի նրան, գգուեցի ու սկսեցի համբուրել երեսէն։ Ես տխուր տեսարանը կարի զգալի եղաւ ներկայ եղողներին անդամ, որոնք կարեկցութենէն կարտասուէին, իսկ Սրապիոն պապը զանազան սրտաուչ խօսքերով կըխրատէր զմեզ։

Մինչ այս մինչ այն՝ ներս մտաւ և Յակոբ վարդապետն, որ ստիպեց զմեզ հեռանալ միմեանցից և չարունակել էն դառն և լալագին ձայնով տեսարանն, որ տաղտկալի էր ներկայ գտնուողներին։ Առաջնորդն առաքած էր զՅակոբ վարդապետն ուրախակից լինել ինձ, լսել Յովսէփէն ինչ ինչ նոր լուրեր և վերադառնալ պատմել ինքեան, որովհետև եպիսկոպոսն դեռ ևս հաւատի չեղած Յովսէփի իմ սպասաւոր լինելն, չէր էլ նրա երեսն տեսած յերկիւղէն։

Տիրացուն վերադարձաւ վանքը, բայց Յակոբ վարդապետը խնդրանօք Սրապիոն ծերի մնաց զիշերը հիւր, որ և առաջարկեց Յովսէփին նստել ու պատմել իւր գըլխին եկած անցքը։ Թէպէտ Յովսէփն երկարօրէն և մանրամասնաբար է պատմած ինչ վշտեր էր կրած, բայց ես, որդի՛, քեզ գլխացաւութիւն չտալոյ համար և ինձ էլ չտխրացնել անցած գնացածները յիշելով, համառօտաբար ասեմ այժմ։

Երբ ես Շուշի առաքուում եմ զՅովսէփը երիվարներ բերել, նա հասնում է տեսնում, ինձ ստորադրեալ ձիաւոր զօրքէն ոմանք՝ որք պահնակ էին նշանակուած, իւրեանց երիվարների թամբերը դնում են իմ հեծելի երիվարների վերայ, որպէս զի ինքեանք հեծնեն ու փախչեն։ Յովսէփը տեսնելով նոցա էս տմարդի փախչելն և

երիվարներ փախցնելն, արդելառիթ կրլինի, բայց էնպիսի ժամանակն ով նրա բերանին կընայէր, վասնորոյ և ինքն ևս ձեռը ոտը կանէ, մի կերպով երեք երիվար առանց թամբի կըքաշէ կըբերէ, որպէս զի մինի վերայ ես, միւսների վերայ ինքն և Դաւիթն հեծնենք ու դուրս փախչենք բերթէն. իսկ Մովսէսն արդէն տասն օր էր՝ որպէս պատմած եմ՝ հիւանդ զոլով, երկրացի Հայի տանը պարկած էր, ուրեմն և նա ազատուած էր էս վտանգներէն: Յովսէփը փոքր ինչ նոցանէ հեռանալով, յանկարծ կրպատահի երկրացի խուժամուժի, որոնք կատաղաբար կըյարձակուին նորա վերայ և կըխլեն երկու երիվարն, իսկ ինքն իւր հեծած ձիովը հազիւ թէ կրկարողանայ նոցանէ ազատուիլ, փախչել ու հասնել մեր վրաններին էն ժամանակն՝ երբ յափշտակող ամբոխը խառնիխուռը մին զմինի ձեռքէն կըխլէին իմ կայքը, ուստի և նոցանէ ևս խուսափելով կրձեպէ՝ կրժամանէ Մովսէսի կացած տան դուռը և կըյանձնէ տակի երիվարը տան տիրոջն ու ինքը փութով կը վերադառնայ վրանների տեղն, որպէս զի թերևս զիս որոնէ գտնէ ու առաջնորդէ Հայի տունն, որ ի հարկէ էնպիսի միջոցումն գոնէ անփոյթ տեղ էր:

Յովսէփը կըվերադառնայ վրանների տեղը, կըտեսնէ ոչ թէ ոք մարդ չկայ, այլ և եղած-չեղածն այնպէս սրբած տարած են, որ նշանն անգամ չի երևար, թէ մին ժամ առաջ այն տեղ վրաններ են եղած կամ բնակութիւն: Փոքր ինչ այս կողմն այն կողմն որոնելով, մի փոս տեղում կրգտնէ իմ Դաւիթ և երկու մահմետական սպասաւորներիս դիակն շատ տեղաց վերաւորուած, տիպ-տիպը ընկած: Յովսէփն ըստ քրիստոնէական և ընկերական պարտաւորութեան, դօտիկն իւր մէջքէն կըբանայ, Դաւթի դիակը կըփաթաթէ՝ կըշալակէ՝ կըբերէ կըձգէ նշանաւոր տեղ, որպէս զի մարդիկ ուղարկէ յետոյ, տանին թաղեն քրիստոնէական ծիսով: Փոքր ինչ հեռացած այն տեղէն, և ահա կըզդայ քամակէն թրի հարուած, յետ կընայէ, կըտեսնէ երկու սրիկայք, մօտիկ ձորէն դուրս եկած, թրերը հանած պատնէշէ՝ կատաղած զենքը կըհարկանեն, վասնորոյ դիակը վայր կը ձգէ կըփախչի, բայց նոքա միշտ հետամուտ կըլինին ինքեան երկու տեղէն վերաւորելով: Մի և նոյն ժամանակն՝ երբ Յովսէփն ազատուած կըկարծէր, միւս կողմէն քանի մի ուրիշ երկրացիք առաջն կըբռնեն, կը շրջապատեն, այլ ևս վէրքեր տալով՝ հրացանի կոթով հարուած հարուածի վերայ աւելացնելով, վայր կըձգեն, կըպլոկեն, կարծելով թէ շուտով կըմեռնի՝ ինքեանք կըհեռանան ուրիշ որս գտնելոյ համար:

Յովսէփն արիւնաքամութենէն կիսակենդան քանի մի ժամ գետնատարած մընալէն յետոյ՝ փոքր առ փոքր ուշի կըգայ կընայէ սրիկայքն աներևոյթ եղած, կաշխատէ մի կերպով կընստի և տպա մերթ սողալով, մերթ կկրգած, մերթ կուզիկուզ հազիւ մութն ընկած կըհասնի Մովսէսի կացած տունը, ուր դարձալ ուշաթափ՝ անզգայ կըլինի: Տան տէրը վերաբոյժ կը բերէ, արիւնը կապել կըտայ սպեղանիքով, հազիւ հազ միւս օրը նա աչքերը բաց կանէ՝ շուրջ կընայէ, կըզդայ որ իւր ասընջականի պաշտպանութեան ներքոյ է: Երրորդ օրը մարդ կըզրկեն, Դաւթի դիակը կըգտնեն, ծածկաբար կըտանին կը

թաղեն Հայոց գերեզմանատանը քրիստոնէական ծիսով։

Մովսէսն և Յովսէփը կրկարծեն և էսպէս էլ պէտք էր կարծէին, որպէս թէ և ինձ սպանած են, վասնորոյ կասեն՝ պէտք է որոնած և իմ դիակը գտած, և ով կարող էր իմ դիակը ճանաչել էնքան սպանելոց մէջն՝ բաց ի Մովսիսէն, որովհետև Յովսէփը տանէն չէր կարող դուրս գալ։ Մովսէսը անձն փոքր ինչ կազդուրուած լինելով և չնայելով բժշկի արգելելն, չէ համբերում՝ դուրս է գալիս տանէն հիւանդ հիւանդ, յեցած ցուպի վերայ՝ հասնում վրանների տեղն, ուր հարիւրաւոր դիակներ աստանդ ածած, որոնում, որոնում նրանց մէջն, չգտնելոյ համար յուսաբեկ վերադառնում է օթևանը, և նոյն օրը նորա տենդ ու ջերմն կրկնում է, յորմէ և էս օր ըստ օրէ հիւանդութիւնն սաստկանալով քանի մի օրէն յետոյ վախճանւում է։

Յովսէփն, ինչպէս ասացի, արիւնաքամութենէն թալկացած-թուլացած, անուժ երկու-երեք օր զրեթէ անզգայ է լինում, և այնուհետև փոքր առ փոքր զգում է իւր ընկերի մեռնիլը մի և նոյն սենեակումն՝ ուր ինքն է պարկած, և միւսի տմարդի սպանուիլը մտաբերելով, մանաւանդ իւր մեծի կորնչելն՝ աներևոյթ լինելն, որ աւելի անտանելի է երևում ինքեան, վասնորոյ արհաւիրէն՝ զառանցքէն այլ էս չէ կարողանում հանգստանալ, ուստի կողկողալն խնդրում-աղաչում է ասպնջականէն, ինչ կերպ և լինի, դուրս բերէ ինքեան Հուշ բերթէն և ուղևորէ դէպի Թավրէզ։ Որպէս տան տէրը, նոյնպէս և բժիշկը խորհուրդ են տալիս նրան մնալ անդէն ցկատարեալ առողջութիւնը, մանաւանդ որ, աւելացնում են, այժմ ճանապարհները խառն են ու վտանգաւոր, քարվաններ չեն բանում, ոչ մի տեղէ քրիստոնեայ եկող-գնացողներ չկան, մահմեդականների հետ ճանապարհորդութիւնդ և էս վտանգաւոր է, Հուշէն դէպի Թավրէզ Խուդաֆիրենի կամուրջովը գնալդ անկարելի է, ըստ որում էնտեղի վայրենի բնակիչները մին զմինը անգամ են կողոպտում ու սպանում, ուր մնաց քեզ՝ որ Հայ ես և Արախլիի կերպարանքէդ աւելի շուտով կըճանաչեն՝ որ բանակի զօրականներէն ես։

Բանի մի շաբաթ էս դառը վիճակի մէջ մնալով Յովսէփը, մի օր լսում է թէ՝ քաջ Ղափանցի և Սիսիանցի Հայեր կան, զբնում են իւրեանց տները, նա էլ չէ կարողանում համբերել, ընդդէմ ասպնջականի և բժշկի կամացն՝ հիւանդ հիւանդ դուրս է գալիս, ճանապարհ ընկնում նոցա հետ, գնայ Աղուլիս կամ Ուրդվար, անտի դէպի Թավրէզ։ Եհա էսպէս հասնում է նա պատահմամբ էն գիւղն, ուր զՄուքի երիտասարդն ինձ Հայ-բնակիչներն առաջնորդ էին տուած, և այն տեղ լսում է որ Շահին ծառայող մի Հայ Խան հասած է նոցա գեղն և անտի գնացած է Տաթևի վանքն, վասնորոյ և ինքը Յովսէփն էլ շտապում է գալիս է վանքն՝ ինձ անդէն գտնելոյ համար։

Միւս օրը Սրբազանն մարդ էր ուղարկած իմ քամակէն, գնալ Յակոբ վարդապետի հետ վանքը։ Հարկաւոր չէ ասել թէ՝ էս անդամն եպիսկոպոսն ի՞նչ յարգանք և համարումը ցոյց տուեց ինձ, կրկին կրկին ներումը խնդրելով որ ինձ արժանի պատուով չէ ընդունած, և թէ՝ էսպիսի ժամանակը շատ անգամ խաբեբայութիւններ են պա-

տահում և վանականներն ուրիք ուրիք միամտութեամբ՝ կարեկցութեամբ և իւրեանց պաշտօնին վերաբերեալ հիւրընկալութեամբ ասպնջական լինելով փախստականներին, մեծամեծ վնասներ են կրած։ Նոյնպէս ժամաչափ զրուցելէն յետոյ և ահա ներս բերին զՍրապիոն պապը և նորա քամակէն ևս քանի մի այլազարդ զեղացիներ եկին, որոնք հետ զհետ գալով-գալով շատացան, եղան մերձ տասնուհինգ անձինք, հրաւիրեալք առ ի ճաշել եպիսկոպոսի մօտն և ուրախակից լինել ինձ։ Այս օրն ինձ համար տրտմութեամբ և նոցա համար ուրախութեամբ անցկացաւ, ըստ որում ուշս միայն գրաւել էր Յովսէփի հիւանդութիւնն, որ կարի կասկածելի էր թւում ինձ։ Արդարև ես չէի սխալուած։ Նորա վէրքերն օր ըստ օրէ զայրանում էին և խօնջութենէ ջերմն ու տենդն ևս շարունակում էր, յորոց տասն օրէն յետոյ աւանդեց հոգին զրկում աղերսաւոր աչքերով, զոր մինչև ցայսօր զառնութեամբ և սրտակեզ կսկիծով կը յիշեմ։

(Ի յԵրուսաղեմ։)

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(ԱՌԱԿ Ի ԲԱՐԲԱՌ ԱՐՑԱԽԵՑԻՈՑ)

ՁՈԼՔՑԻՆ ՀՈՒ ՄԱՀԸ

Ցորտը եկած դիւռնը կըտրած,
Ձիւնն ման տեղ մին կեազ կիւտած.
Փսիւնգիւն լավ մարդ ալ խեղդըմ
Մարդու աչքը բեան չէր տեսնըմ։
Խեղճ Զուլուցէ հլիւէրը,
Սըրթսըրթումամբ փէտ ալ կըտրալ.
Անքօն էր էն սաղ քշերը
Լավ հեարվալար ապուխտ դէռալ։

Ըռութանա երկնցաւ։
Քինից ծրմակ ճեխ արաւ,
Շնչեակից օսէն դըրաւ
Տընքտընքալու գեալիսար։
Բիզմրեց խեղճ հլիւէրը
Տսվը քըցեց ծանդըր բեռնը,
Մէաը քըցեց խեղճ խօխէրը
Պարտքը ոսկին խարջն ու դեգը։
Թուռանչ քաշեց, ասեց Աստուած
Էս հինչ օր ա իմ օրըս
Շանի հեալին խօխաս սալաճ,
Հինչ քարաւ տամ գիլօխս։
Ղըրկէ մահը հիւդիս կալ,
Իմ մալրելըս էլ զուր ա։
Աստուած աղօթքը լսեց,
Գաբրիէլ ախպէրը ղրկեց.
Նկաւ աչքերը չըռաճ
Թորը շողշողում գեռաց։
«Հա հլիւէր եկալըմ
Եաղուղ յինչ կայ կանչալըս»
Հլիւէրը որ տեռաւ
Սիրտը կտրեց փորն ընկաւ,
Տեղան կաղնեց սրտիսրթնած
Շուարած գիլօխ տուաւ։
Հա բարըլիս քիմատաղ
Գիւտումըն յօր ըմ կանչալ.
Շատ ծանդըր ա էս բեռնըս
Ցինչ կինի դիր շէլակըս։

Էսա զուզի դիւնիս բեանը
Թէա ապրելը դիժարա,
Մեռնելը լավ դիժարա։

Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆՑ ՇՈՒՇՆԵՑԻ, ԱՇԱԿԵՐՏ Ն, ԴԱՍ. ՀՆՄԱՐԱՆԻ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ԲԱՐԲԱՌ ԱՐՑԱԽԵՑԻՈՑ։)

ՄԷԺԼԻՍ.

«Քօռ մասխարա մէյմունը
Հեաուեադէանը, 1)
Մէիզ 2) էօր,
Արջ ախպէրն էլ հետընները.
Օղեցին մին մէժլիս սարքեն
Թեաւ քեամանեան ճարեցին,
Դեմամը որ հէնց կար ու կար.

(1) Էշ։ (2) Նոխազ։

Նօթեր, մուզիկ էլ բերին
Յոռուն 5) տակին նստեցին.
Ածեցին զրռզռացին
Ջանի երա տրորվեցին,
Ա՛մա էս մեր մէժլիսը
Շատ անալի դիւս եկաւ։
Մին էլ ուստայ մէյմունը
Ջեռաց տեղան երկացաւ. 4)
Եա՛վաշ եա՛վաշ ախպեր ջան
Ըղի չեն 5) նստել ինձ եշէք 6)
Դու արջ ախպէր,
Քու զեմդ բեր
Ջիլին 7) ըռաչին
Նստի ըտեղ։
Ես էլ ըստեղ կնըստեմ
Թեռուլն հետ իւրիւր քըցեմ 8),
Դէ մըհէկ ածէնք տեսէք
Սարեր բոլեր սար կըղեան։
Նստեցին հու 9) ածեցին,
Էս էլ անհամ էր տեսին։
Էհէ՛ կացէք այ ջանըմ
Պարուն էշը մին գեօռաց,
Ըգրա ճարը քըթալըմ,
Դիւք մին ջեարդին 10) նստեցէք,
Մեր բեանը լաւ կըդէռնայ։
Էշին խոսքին լըսեցին,
Թեազադան դիւզ նստեցին։
Էս դեսնըմ 11) որ մեժլիս չէ,
Էշի հըրսանիք շինեցին։
Դէհ թամաշան ըստեղա,
Ասիլ 12) լեաւ կռուի տեղա,
Միննն ասմա, փիսըս նստալ,
Էն մինը լաւի կըզնըվալ 13)։
Մինը թեա քէթըդ ծոռա,
Էն էլ քու ա՛չքդ բոռա։
Մին թեարզ 14) իլաւ, բըլբիլը
Լըսեց էս զալմաղալը,
Հէնց թըռաւ նստեց ծառին,
Մէժլիսցիք զըվիր արին 15)։

Ա՛ստուած սիրես համբերի
Մեր մէժլիսը մին սարրի.
Թեաս, քեամանչա, նօթ, մուզիկ
Հինչ որ ասիս լոխ 16) օնինք,
Դու հէնց լըհա 17) մեզ ասի,
Էս հունց նստինք վէր սազի։
« Է՛ բարեկամ, բըլբուլն ասեց,
« Փափուկ անկուշ 18) սաս հու օնի,
« Դա կըկարայ մեժլիս սարրի.
« Ա՛մա դիւք հունց վէր էլ նստիք
« Ջատ չըը շինիլ լաւ պիտացէք։

Ս. Գ. ՀԱԽՈՒՄԵԱՆՑ

(ԱՌԱԿ Ի ԲԱՐԲԱՌ ԱԳՈՒԼԵՑԻՈՑ)

ԳԻՒԼ ՀԱՅԵՆ ԳՈՒՈՒԱՆ.

Եանի տինիս գիւլիցն ալ ըռըխվէր 1) հէյվուն,
Ըշխարքամս ըսկի 2) նիլ էա դրո նմուն.
Ա՛խսար Թօրա 3),
Թէա էլէածն 4) ալ՝ աս խանիխարսրին բըռնի։
Սրօնը մուն ջէանդէակ 5) էա.
Օր 6) ճանդնա ընդել՝ ալ գիդիլ չի հուրտի արի,
Օր ադիկ էանբէան 7) թէաքի շիւտէավ մարրա-
զարթի, 8)
Ա՛նպէս օր՝
Ըրխըթէանի հուսկուռ 9) ջակիլն ալա մտիցը ըն-
դէանէամ 10)։
Ալ աստի ջէանէավէարներին էօգաին գիւլվէա
մէազէամ,
Ամա մոյն մոյն 11) սրուց հախին գիւլն ալ դէանի.
մէաթ էա.
Եօխամամ չէ՝ ամման 12) տեղ դրո ուստ ըկէաղուն
բիւնն ալ բիւրդ էա։

(16) Ամենայն։ (17) Միայն։ (18) Ականջ։

(1) Բէրանը մեծ, ուտելու միայն հոգացող։ (2) Արդեօք։ (3) Քաւ լիցի։ (4) Եղածը։ (5) Դի։ (6) Որ։ (7) Վատ։ (8) Ուտէ. այս բառը գործ կածեն Ագուլեցիք ծաղրանօք ասելու ժամանակ։ (9) Ոսկու։ (10) Մոռանում։ (11) Երբեմն երբեմն։ (12) Ամենայն։

(3) Ուռի։ (4) Յոռն եկաց։ (5) Ոչ պդպէս։ (6) Հայեցարուք։ (7) Բարձրաձայն։ (8) Յարմարել։ (9) Եւ։ (10) Կարգաւ։ (11) Անգամ։ (12) Իսկ։ (13) Բոլորովին բարկացեալ։ (14) Կերպ։ (15) Զանձրացուցին։

Մոյն հիտ՝ լոթռանի պէս թէահաթ թէանաի նի ասլիս վիտին,
Բռդէան 13, ուսկուռին կուտուրը 14) դաճաղ ա ընդէանէամ կէլին,
Ա՛նպէս օր, աա Ասսու 15) զաղօքը սրուտի էա մընալիս հեղդուի,
Ա՛կնարը չէծ ունչ դէարէամ էա կէլ տօ, ունչ ալ հիտ բիրի.
Հրըկըտրի, ալ գիդէամչի թէա ունչ հուղը տօ գիւլիւը,
Մա գիդէահի ատնարը մ ակնէած էա դիբի գէօռը.
Մուն ալ տինիս ազըպզդտ 16), դուռնին մոյնը ռմստ ա դէլիս
Հէյվունը տրընէլին ոգէս ատնաւ գիւլիհէօվն էա ըղընէլիս.
Կոյունչ կոյունչ, թէաքի խէղճին մուն քէօմէադ արի
Օր ունչա, զոռաւ նէափէասն 18) ալ նէա դէարի հանի.
Ամա թօրա թէա՛, աս կտէմտէարը մուն չէ ալ նէա անած,
Հէալէամ մէխկ դէլէաւ էինքը նրօ կօշտն 19) ա նէահէած,
Օր փէրզի տինի թէա, սկի դէմյիլ 20) էա ուսկուռը հիտ բիրիլ,
Ո՛ունչա թէա, էհ, ամչխարքա, հէալբէաթ մուն օր ալ հիրէան էա պատահիլ,
Անդուր հուջի դիւլին ըռբխիցը ծիդիծիկ 21) կտոցը նիյ էա անցալ,
Ուսկուռին կրճքպիցը բըռնէլ, էլմէաւ 22) քաշալ դիւս հանալ.
Ե՛ատնէան 23) ալ եախալամիշ էա նարամ, թէա բէաս հոկքան քեօլլուզիս էավէազը.
Էավէազը՛ 24), հրն, բէալլէադէօզ,
Ըռբխին մտայկ օր, ատրը տիս, հէալէա ծամած խօսքը:
Ըստէղ դիւլը հրռսրթէանի 25) ալ գիդէամչի ունչ արի.
Նուկօ օր, ան չէօլէամը խէղճին բիւռդը բիմբէակը գրճի,

(13) Յանկարծ, (14) Կտորը, (15) Ասուծոյ, (16) Ահաւասիկ, (17) Աղաչում, (18) Շունչը, (19) Մօտը, (20) Կարողանալ, (21) Երկայն, (22) Զդուշութիւնիս, (23) Ցետոյ, (24) Փոխարէն, (25) Բարկութիւնից,

Կտրըթէանի ըկնէրիցը գիւլդիւր 26) ըրտնսունք ա կոյա նէլէամ.
Պա՛ պա՛ պա՛, ամա թէա ըռբխիցը ընէր էա վէր թափամ,
Ա՛խպար թօրա՛ թէա՛, սկի դժոխքին ստանալ նէա գիդէամ 27)
Է՛արէա 28) բօլա 29, ամմն գիւնիդըմ,
Հըրէաք էա ունչքան 30) մայսրս վիրըս քէանդէալ.
Խանիխարաքի ջընս, ձեռք չիս քշելէաց մէագէամ:
Հէալէամ ադիկ 31) էա օր բիւնրա բիւրդ չի նէլ
Կտօցտ 32) զրէահէալրս դիւս բիրիս,
Եօխսամ չէ, քու փընթի գիւլիհէօվրտ 33) մուտեղ 34)
Հրդէօ փուրամրս նէա սէաս տալիս.
Բէաս էամ ասքան քաշած քեօլլուզրս 35),
Էաշէակ բէանի տեղ չի քու ուրչիտ . . . .
Քաշվէա 36) զրնիցրս կրծհի նէամքեզդ,
Գիդէամս էլի ունչըմ բիրիլ գիդիհիտ.
Հայդէա կուխկրտ 37) մա հրատրցանիլ,
Նէօ, ամա եըմանի օր ատ դէօնրմ բշխէլրմ քիզ,
Ա՛նդուճրտ 38) բէօց լսէ, ասկուաթ 39) օր բրընէլրմէ՛,
Մա եըմանի օր, ալ պրծընէլու ճօն 40) չօնիս քիզ.
Ատուր դինը մէագէամ քու ըռէխրտ էա օր ալ ժէարքիցրս պրրծանիս,
Քաշվէա ռէադ էլի քէալլէադէօզ օր ակնիս ճըղըվդիրս ըրվէալիս.
Մա գիդէայի օր ալ ակնամս ըրվէահէալրս՝ ալ պրրծընէլու ճօր չօնիս:

ԱՌԵՏԻՍ Ա. ՋԱՐԳԱՐԵԱՆՑ ԱԳՈՒԼԵՑԻ
ԱՇԱԿԵՐՏ Դ ԴԱՍԱՐԱՆԻ Գ. ՀԵՄԱՐԱՆԻ.

(26) Յորդառատ, (27) Իմանում՝, (28) Անպատուաբար՝ այ տղայ, (29) Բաւական է, (30) Ուրբան որ, (31) Լաւ, (32) Կտուցդ, (33) Գլխովդ, (34) Մեխին, (35) Զարչարանքս, (36) Հեռացիր, (37) Կսկծաս, (38) Ա՛կանջդ, (39) Միւս անդամ, (40) Հնար,

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԵՍ ԵՒ ԻՄ ՍԻՐՏՍ.

Հանդարտ մնա դու, սիրտ իմ՝ ինչքա՞ն այդքան վրդով ես,
Ելետատան ծովու պէս մտածմանց մէջ ծփում ես։
Իմ օրերին վկայ ես՝ դրութեանս տեղեակ ես,
Թէ լաւ թէ վատ՝ անցանեն, այս բանս էլ լաւ գիտես։
Մ՚իայն ուրախ դու մնա, փառք տուր քո ստեղծողին,
«Համբերութիւնն կեանք է», նայեմք մինչև մեր վերջին։
Մեր Տնօրէնն առաջուց մեր պէտքին որոշեր է,
Մ՚ի լեր ագահ կողոպտիչ՝ որ բաժինդ մի և նոյնն է։
Թէ մարդ լինի անիրաւ, յարդ և պատիւ չսիրէ,
Խղճմտանք չընճանաչէ, շուտով դանձի տէր լինէ։
Բայց չունենար բարի գործ՝ աղգասիրական ոգի,
Երբ վախճանն կհասնի՝ անշուշտ ամենն կթողնի։
Անիրաւ ժողովածն՝ անիրաւն կտանի,
Նորան օգուտ չունենար, չարչարանքն իզուր լինի։
Քո տեսած այս աշխարհում շատեր եկին գնացին,
Բարեգործ մարդկանց անուն միայն փայլուն մնացին։
Խաղաղ մնա դու, սիրտ իմ, մի՛ լեր ագահ չափազանց,
Ջանա թողնես լաւ անուն՝ որ փառք լինի քեզ անանց։
Մ՚իշտ հետևում եմ ես որ քեզ հեղ պանդուխտ չթողնեմ,
Երբ չաջողէ բերմունքն՝ ում երթամ գանգատ անեմ։
—Ինչով լինիմ ես ուրախ, չվրդովեմ բայց ինչպէս,
Ոչ ես արդեօք, մտածիր, ի՞նչի իզուր դիս տանջես։
Օտար հող ու ջրի մէջ՝ խորթ անախորժ օդ ծծեմ,
Հայրենեաց յուսով պահես՝ որոյ համար կմաշուեմ։
Ի՞նչ օգուտ որ արի եմ՝ կտամ քեզի քաջութիւն,
Այլ մտածմունքդ անշահ՝ խանգարէ իմ զօրութիւն։
Թէ որ ինձի դու լսես՝ հին գաղափարդ փոխես,
Հասի՛ր, ահա՛, ժամն է արդ՝ թէ հայրենիք կսիրես։
Այդ ունայն զատարկ յոյսդ քեզի օգուտ չբերեր,
Այսօր վաղն ասելով կորուսած են քո օրեր։
Երջանիկ էի այն օրն՝ երբ դիս տեսայ Հայաստուն,
Այլ քո անպէտ մտածմունք կրկին դարձուց Պարսկաստուն։

Ինձ միշտ ցաւ է, զի վախեմ թափառական դու այդպէս՝
Մնաս մինչ ի մահդ և որով օտար հողում զիս թողնես։
Մի օր յանկարծ էլ օրհասդ «առ այս բաժակն» ձայնէ,
Որ չես կարող զանցանել՝ անշուշտ ըմպել քեզ պէտք է։
Սարսափում եմ երբ յիշեմ թէ հայրենեացս կարօտ՝
Օ՜ին կլանէ անբերրի Պարսից հողն ժանտ կոկորդ։
Ահա իմ վերջին կտակ՝ կպատուիրեմ չանես զանց,
Եւ Հայոց ջերմ հողն մէջ զիս ամփոփես Ռժշկեանց։

Ի Թէհրան։ 1877։

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՆՉԵՍԹԵՐԱԲՆԱԿ ՀԱՅՔ.

Մենք՝ Հայերս աւելի սակաւ ճանաչում ենք եւ գնահատում ենք մեր ազգի ընդհանուր լաւ յատկութիւնները՝ որքան որ պիտի ճանաչէինք նոցա եւ գնահատէինք։ Այս մտքի մէջ աւելի եւ աւելի համոզւում է մի Հայ մարդ՝ երբ կատարում է նա մի երկարատեւ ճանապարհորդութիւն հեռաւոր երկիրներում եւ ծանօթանում է այնտեղ իւր հայրենակիցների կեանքի եւ գործունէութեան հետ։ Իւրեանց հայրենիքում Հայերը՝ մնալով սահմանափակուած կեանքի նեղ շրջանի մէջ՝ չունին միջոց արտայայտել, ծաւալել եւ զարգացնել իւրեանց բազմակողմանի եւ բարձր ընդունակութիւնները, մինչդեռ օտար երկիրներում, եւ մանաւանդ Եւրոպայում, շրջապատած լինելով կեանքի աւելի յաջողակ եւ ընդարձակ պայմաններով՝ նոքա ակընյայտնի ցուցանում են այդ ընդհանուր ազգային եւ յիրաւի զարմանաց արժանի յատկութիւնները։ Չյիշելով այն բազմաթիւ պատմական յիշատակները, զորս թողել է Հայոց ազգը Եւրոպայի շատ տեղերում անցեալ դարերու ընթացքում եւ որոց մասին սակաւուք խօսած եմ իմ նախընթաց նամակներիս մէջ, նոյն իսկ ներկայ դարում, նոյն իսկ այսօր, երբ Եւրոպական ազգերը հասել են լուսաւորութեան բարձրագոյն աստիճանին, Հայերը զարմանալի ճարպիկութեամբ եւ մեծ յաջողակութեամբ մրցում են նոցա հետ։ Ելէք ճանապարհորդեցէք Եւրոպայում, եւ ահա կտեսնէք ինչպէս մեր հայրենակիցները հանդիսանում են այս ինչ մայրաքաղաքում իբրեւ երեւելի վաճառականներ, այն ինչ մայրաքաղաքում՝ իբրեւ նշանաւոր հարուստներ, այստեղ՝ երեւելի գիտնականներ, այնտեղ՝ համալսարանների պրոֆէսորներ, մի տեղ՝ նախարարներ եւ զօրավարներ, միւս տեղ՝ դեսպաններ եւ հիւպատոս-

ներ, եւ՛ն, եւ՛ն։ Եւ այնու ամենայնիւ կան ոմանք, որք ոչ միայն կարծում են՝ այլ եւ աշխատում են համոզել ուրիշները թէ՝ Հայերը մի բթամիտ եւ անընդունակ ազգ են եւ անարժան քաղաքական կենդանութեան։ Ո՛չ, ո՛չ. այդպիսի կարծիքը սխալ է եւ միանգամայն թշնամական. Հայոց ազգը եղել է միշտ ընդունակ եւ շնորհունակ եւ կլինի այսուհետեւ առաւել եւս ընդունակ եւ հանճարեղ, միայն տուէք դորան քաղաքական հանգիստ եւ ազատ կեանք եւ միջոցներ դէպ ի Եւրոպական լուսաւորութիւն։

Վերոյ բերեալ մտքերը հետեւանք են այն խորին եւ վսեմ տպաւորութեան՝ որը գործեցիմ վերայ Մանչեսթերի փոքրաթիւ Հայ հասարակութիւնը։ Թէեւ այլ եւ այլ հանգամանքները չներեցին ինձ մնալ այդ հասարակութեան մէջ երկու-երեք օրից աւելի, բայց եւ այնպէս ես միջոց ունեցայ բաւական մտիկ ծանօթանալ նորա հետ։

Ինչպէս Եւրոպայի այն քաղաքները, ուր կատարվում են գործարանների նշանաւոր արտադրութիւններ կամ ուր կան խոշոր նաւահանգիստներ ծովային վաճառականութեան համար, նոյնպէս եւ Մանչեսթերը, որը Անգղիայի գլխաւոր քաղաքներից մին է, ի վաղուց գրաւել է Հայ վաճառականների ուշադրութիւնը։ Այժմ այդ տեղ կան 50—60ի չափ Հայեր, որոց մէջ չորս հինգ նաեւ ընտանիք։ Դոցանից մեծագոյն մասը Տաճկաստանցի են՝ Պոլսից, Զմիւռնիայից եւ այլ տեղերից, իսկ փոքրագոյն մասը՝ Ռուսաստանից, առաւելապէս Թիֆլիզից. այս վերջիններս այժմ հազիւ երեք չորս հոգի են, որովհետեւ ներկայ պատերազմի պատճառով Ռուսաստանի առեւտրական գործերը խափանուած լինելով՝ շատերը ստիպուել են վերադառնալ իւրեանց հայրենիքը, բայց յուսալի է որ պատերազմից յետոյ իսկոյն կշատանայ վերստին Ռուսաստանցի Հայ վաճառականների թիւը։ Այդ բոլոր վաճառականները պարապում են խոշոր գործերով եւ ուղարկում են Տաճկաստան եւ Ռուսաստան միլիոնաւոր գումարների ապրանքներ. սորա համար նոքա պահում են Անգղիական ձեւով կազմակերպած գրասենեակներ (օֆֆիսներ) եւ համարեա ամենեքեան վարժ խօսում են Անգղիերէն։ Իւրեանց քաղցր բնաւորութեամբ, ճարպիկութեամբ, հաւատարմութեամբ եւ այն մեծամեծ օգուտներով՝ զորս հասուցանում են Անգղիացւոց, մեր հայրենակիցները մեծ համակրութիւն եւ յարգանք են վայելում Մանչեսթերում։ Իսկ ինչ վերաբերվում է նոցա Հայութեան՝ ես կասեմ՝ — երանի՜ կլինէր Հայոց ազգին, եթէ Հայերը օտարութեան մէջ ամենայն տեղ նոցա պէս ջերմեռանդ եւ ազգասէր լինէին։ Նոքա ունին մի փոքր բայց գեղեցիկ աղիւսաշէն եկեղեցի, որը կառուցած է 1870 թուին. սորան կցած է մի փոքրիկ եռայարկանի աղիւսաշէն տուն քահանայի, եկեղեցւոյ սպասաւորի եւ այլ պիտոյից համար։ Այս երկու շինուածքի ծախքը եղել է տասը հազար (70000 ռ.) Անգղիական ոսկու չափ։ Եկեղեցին որպէս դուրսից, նոյնպէս եւ ներսից

բաւական սիրուն է։ սեղանը չունի խաչկալ, այս ինքն նորա կողքերը բաց են, իսկ ժողովուրդի համար շարած են դպրոցական նստարանների նման նըստարաններ *) ըստ օրինակի Եւրոպական եկեղեցեաց։ Ժամասացութիւնը լինում է գրեթէ ամենայն օր, իսկ Կիրակի օրերը մատուցանվում է Ս. Պատարագ. այժմ կայ եւ համարեա միշտ այդպէս է եղել, միայն մի վարդապետ, իսկ նորան օգնում են ժամասացութեան ժամանակ ինքեանք ժողովրդականք շապկի հագնելով։ Բարեբախտաբար՝ այսպիսի սակաւաթիւ խումբի մէջ կան տասի չափ անձինք, յամենեքեան Տաճկաստանցիք, որք միանգամայն կանոնաւոր եւ հմուտ կերպով ծանօթ են եկեղեցական երգեցողութեան։ Ահա ապացոյց թէ որպիսի մեծ կարեւորութիւն ունի մեր ազգային դպրոցների համար եկեղեցական երաժշտութեան հիմնաւոր եւ կանոնաւոր դասաւորութիւնը։

Մանչեսթերի Հայերը ոչ թէ բաւականացել են եկեղեցին շինելով, այլ ցանկանում են եւ աշխատում են ապահովացնել նորա յարատեւ գոյութիւնը, իսկ եկեղեցու տարեկան ամենատեսակ ծախսերի համար իւրաքանչիւր ոք վճարում է որոշեալ տուրք։ Այդ տուրքերը ժողովելու եւ այլ գործերը տնօրինելու համար նոքա ունին ատենապետ եւ գանձապահ, եւ ըստ հարկաւորութեան կազմում են ժողովներ, որոց համար եկեղեցական տան մէջ յատկացրած կայ մի բաւական ընդարձակ եւ բարեվայելուչ կերպով զարդարած դահլիճ։ Վարդապետը ստանում է ձրիապէս բնակարան, վառելիք եւ լոյս (գաղ) եւ ծառայ, ամսական 10 ռուբլի (70 ռ.) սննդադրամ եւ հանդերձ ըստ պիտոյից. այսպէս ապահովացրած լինելով նա պարտաւոր է կատարել բոլոր օրինակատարութիւնքը առանց վարձատրութեան եւ եկեղեցում չկայ գանձանակ, սակայն ըստ հայկական բարեպաշտութեան՝ շատերը հարսանիքի, մկրտութեան, եւլն, համար պարգեւատրում են իւրեանց հոգիը։

Մանչեսթերի Հայերը չեն մոռանում եւ իւրեանց հեռաւոր հայրենակիցները եւ առատաձեռնութեամբ օգնում են նոցա հարկաւոր ժամանակ. այսպէս տարի չի անցնի որ մի քանի ժողովարարութիւն չլինի նոցա մէջ Տաճկաստանցի կամ Ռուսաստանցի ազգայնոց համար, եւ այս իսկ օրերս Կ. Պոլսոյ Ս. Պատրիարգի խնդրանօք հաւաքել էին նոքա իւրեանց մէջ 145 ի չափ (1000 ռ. չափ) Անգլիական ոսկի Կ. Պոլսոյ Ազգային հիւանդանոցի համար։

Նոքա չեն մոռանում եւ իւրեանց մայրենի լեզուն եւ ամենեքեան շատ գեղեցիկ կերպով խօսում են Հայերէն։ այստեղ տիրապետում է Պոլսոյ ոճը

(*) Նատ կցաւիմ՝ զի երբեմն ոմանք Հայր Եւրոպայում անշուշտ մի օտար սովորութիւն կրփոխարինեն՝ մինչեւ անդամ Եկեղեցոյ սեմքէն ներս մտցնելով, եւ կրզրկուին այն վայելչ քաջութենէ եւ բարենախանձ հաստատամտութենէ՝ զի ուր որ լինին՝ երբէք չներեն օտարին զոհել ազգային եւ եկեղեցական յատկութեանց եւ սովորութեանց մի նշանախեցը անդամ։ Ե. Խմբ։

թէ խօսակցութեան եւ թէ եկեղեցական երգեցողութեան մէջ։

Այսպիսի եւ սոցա նման գովելի եւ մխիթարելի արժանաւորութեանց հետ մեր սիրելի Մանչեսթերցի հայրենակիցները ունին՝ ինչպէս յատուկ է մարդկան՝ նաեւ մի քանի պակասութիւններ։

Նախ՝ թէ եւ առհասարակ սիրով են միմեանց հետ, բայց իւրեանց վարդապետի վերաբերմամբ թեթեւ հակառակութիւն ունին եւ բաժանուած են երկու մասն։ Մեծագոյն մասն սիրում է եւ յարգում է իւրեանց հովիւը, եւ Արժ. Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեանը յիրաւի սիրելի եւ յարգելի անձն է իւր քաղցր բնաւորութեամբ եւ հեզ ու պարկեշտ բարքով։ Սա ընկ Տաճկաստանցի է (կարծեմ Վանեցի), բաւական աշխարհատես մարդ, գիտէ լաւ գրոց լեզուն եւ ունի շատ ձեռագիր աշխատասիրութիւններ ազգային պատմութեան եւ ժամանակագրութեան վերաբերեալ։ Իսկ փոքրագոյն մասը, որը բաղկացած է աւելի երիտասարդներից, թէեւ նոյնպէս սիրում է եւ յարգում է իւրեանց հովիւը, բայց կամենում է ունենալ եւրոպականապէս գիտնական եւ լուսաւորեալ հոգեւորական թէ օտարականների մէջ աւելի փայլելու համար եւ թէ այլեւայլ գիտնական ձեռնարկութեանց՝ տպարանի, ամսագրի եւն հաստատութեան համար։ Բայց որովհետեւ այդպիսի անձը պահելու եւ այդպիսի գործեր սկսելու համար կհարկաւորին աւելի մեծամեծ գումարներ, ուստի համաձայնութիւնը չէ կայանում երկու կուսակցութեանց մէջ։ Թէեւ տեսականապէս փոքրագոյն մասը աւելի իրաւունք ունի իւր կողմը, բայց գործնականապէս զուրկ չէ իրաւունքից եւ մեծագոյն մասը, եւ կարելի է երկիւղ կրել որ այսպիսի ըստ երեւութին թեթեւ տարաձայնութիւնը՝ ժամանակով աւելի մեծ դժտութիւններ կյառաջացնէ։

Երկրորդ՝ Մանչեսթերի Հայերը հաստատել էին մի քանի ժամանակ առաջ ազգային ընթերցարան, որոյ համար յատկացրել էին առանձին սենեակ եկեղեցական տան ներքնայարկում, որպէս զի կարդալով ազգային լրագիրներ՝ աւելի տեղեակ լինին ազգային անցքերին։ Բայց այդ ազնիւ եւ գովելի ազգասիրական եռանդը շուտով պաղել է եւ այժմ համարեա ոչ ոք չկայ ընթերցարանը յաճախող։ Այդ ընթերցարանում կայ մի փոքր գզրոց գրքեր, մնացած հանգուցեալ Կարապետ Վարդապետ Նահնազարեանցից։

Երրորդ՝ Մանչեսթերի Հայերը սկսել են ուրիշ տեղերի վատ եւ վնասակար սովորութիւնը ընդունել, այն է ամուսնանալ օտարուհիների՝ ըստ մեծի մասին՝ անգղիացուհիների հետ։—Օտարուհին եթէ մինչեւ անգամ շատ ցանկալի, երբէք չէ կարող Հայ մայր լինել Հայ մանուկների համար, եւ մենք ունինք անթիւ օրինակներ՝ ինչպէս նոյն իսկ վառ եւ եռանդոտ ազգասէրների, որոց կանայքը օտարուհիք են եղել, զաւակները չեն իմացել մինչեւ անգամ Հայերէն խօսել։ Գուցէ օգտակար լինէր եթէ մեր հայրենակիցները ամուսնանալով եւրոպացուհիներու հետ՝ շու-

տով վերադառնային իւրեանց հայրենիքը եւ միշտ մնային այն տեղ. այն ժամանակ այդ օտարուհիքը ինքեանք կսովորէին հայերէն, նոցա զաւակները կմեծանային ազգային ոգւով եւ ինքեանք կրմտցնէին մեր ընտանեկան կեանքի մէջ մի քանի լաւ եւրոպական յատկութիւններ։ Բայց քանի որ նոքա ամուսնանալով օտարուհիներու հետ՝ համարեա մշտապէս մնում են օտար երկիրներում եւ աւելի յարվում են օտար կեանքին, նոցա զաւակները միշտ կորած կլինին հայոց ազգի համար, որը պիտի հարկաւ սկսի նուազանալ թուով։

Աւարտելով խօսքս՝ ես հրաւիրում եմ մեր Մանչեսթերցի հայրենակիցների խոհեմամիտ եւ ազգասիրական ուշադրութիւնը իւրեանց վերոյիշեալ երեք թերութեանց վերայ, յուսալով որ սիրով եւ ներողամտութեամբ կընդունին սոյն մտերմական հրաւէրքը։

Վ. Վ. Բ.

22 (4) Նոյեմ. 1877,

Ի Լոնդոն։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Ա.Ր Պ. ԱՌՆԱՍԱՐԵԱՆՑ։

Լոմբարդոլիան Էրպրպ ամսագրոյ.

Ո՛րքան քաղցր է մարդոյս համար երբ իւր աշխատակիր բազկաց վաստակօքն զարդարեալ այգւոյ կամ պարտիզին մէջ տեսնէ քաղցրահամ պտուղներ եւ երփներանգ անուշահոտ ծաղիկներ ցորս կողմ սփռուած, ինչպան զուարճութիւն կզդայ նորա հոգեմայլ սիրտն եւ որքան զոհունակ եւ զուարթ ժրպիտներ պիտի շողշողէ նորա դիմաց գծագրութիւնն ամեն վայրկեան, երբ իւր երկասիրութեան գեղեցիկ արտադրութեան կենդանութիւնն նկատէ. ես որ բնական բերմամբ միայն եւ ոչ արհեստական կրթութեամբ պարգեւատրեալ գրական ասպարեզում ըստ կարեաց զուն զործեմ մասնակցել ազգային ընդհանուր յառաջադիմութեան, ո՛րքան պատիւ անձին կհամարիմ իմ համբակ գրուածներն հրապարակի վերայ տեսնելիս, ոչ թէ անձնական սնապարծութեամբ, այլ խորհելով թէ երիցուկն անգամ արքունի բուրաստանում մի անկիւն կարող է զարդարել եւ նորանէ առանձին օգուտ քաղողներ եւս կգտնուին. ըստ իս՝ ամենայն որ պարտի իւրեան ապագայ կեանք պատրաստել թէ յերկրում եւ թէ հանդերձելում՝ թէ իւրեան եւ թէ իւր համարարածոցն օգտակար։

Այս նպատակաւ ահա այս անգամ կուղարկեմ առ պատուական խմբագրութիւնդ մի քանի տաղաչափական գրուածք եւ մի ուղերձ առ Մեծ. Պ. Սանասարեանցն, որ արդեամբ բարերար է հանդիսացած գրեթէ Հայ ազգին եւ նորա մամոյ զարգացմանն. այդպարեւ հազուագիւտ են այդպիսի ազնուասիրտ անձինք մեր ազգին մէջ. այս մասին ի դիմաց տեղւոյս Հայ հասարակութեան հրապարակաւ շնորհակալութիւն կըմատուցանեմ այն ազնիւ սրտերին, որոնք ի նպաստ ընդհանուր լուսաւորութեան ի հեռուստ անդամմեռք կ'կարկառեն անխարաբար ուսումնասէր ժողովրդեան կարօտութիւնն լրացնելու։

Ընդունեցէք խնդրեմ այս գրուածներս եւս հրատարակութեան բաղդին արժանացնել, որով Պարսկաստանի խորքերում պանդուխտ եւ տառապեալ սրտիս ուրախ լինելու, եւ որոյ մասին ահա կանխիկ իւր ջերմ շնորհակալութիւնն կ'մատուցանէ Ձեզ

Մ. Ե. ԲԺՇԿԵԱՆՑՆ.

1877 Նոյեմ. 28

է Թեհրան.

Յաջորդ երեսում ամփոփեցինք Պ. Նամակաղրի յղած ուղերձը։

ԱՌ ՄԵԾ. Պ. Մ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ.

Դու Տէր, զԹա՛ մարդասէր, ցրուած պանդուխտ Հայերին,
Տուր բարութիւն մի քիչ էլ մեր այս դժբախտ օրերին։
Աշխարհումն օրէցօր ամեն ազգ յառաջ գնան,
Ընկարդ դրութեամբ միայն Պարսկահայեր եւ մնան։
Ամենից շատ նեղութիւն կրեցին մեր նախնիքըն,
Սակայն զորանց փոխադարձ չեղաւ մեզ հատուցումըն։
Շատ տեղերում մեր Հայեր զործերով յաջողակ են,
Իւրեանց զուարճ օրերում արդեօք մեզ մտաբերո՞ւն։
Կեցցէ՛ ապա ազգասէր Մկրտիչ Սանասարեանց,
Որ իւր սրատես աչօք նկատեց մեզ հեռուանց,
Դիտեց Պարսից կեդրոնի Հայկազնեան վարժարանն,
Յանուն նորա շնորհեց իւր աննախանձ նուէրն։
Մայր Աթոռի Էջմիածնի ամսագիրը շարունակ
Զրիաբար տալիս է մեզ իւր անուան յիշատակ։
Վեհանձնդ դու, Թէհրանու Հայք վայելեն քո նուէր,
Մատաղ մանկունք մշակեն նորանով իւրեանց մտքեր։
Տեղւոյս մեր ազգայինքն ստանան տեղեկութիւն,
Բարւոքմամբ կ'ուղղեն իւրեանց կրօնական թերութիւն։
Շատերի սրտի մէջն սերմանէ կրօնքի սէր,
Ճենալով զարգանան՝ տան քաղցրահամ պտուղներ։
Դղար բարի օրինակ, թող ընթացքիդ հետևեն,
Մեր ազգայինք տեսնելով բարի նախանձով վառուեն։
Դրախտագէտ սրտիւ արդ մաղթէ Թէհրանու Հայը,
Որ քեզ օր կեանք երջանիկ շնորհէ Բարերարը։
Այս մաղթանքի ձայներէն վառուած անկեղծ ի սրտանց,
Կեցցէ՛ն ապրէ՛ն բարեբարբ, կ'զոչէ Մ. Բժշկեանց։

ՏՓԻԽԻՍԻ ՆՊԱՍՏԱՀԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՍՆԱՅՈՂՈՎՈՅ ՀԱՇԻՒ.

Ի նպաստ Բագրեւանդցի Հայոց նուէրներ հաւաքելոյ եւ մատակարարելոյ համար ի Տփխիս կազմուած Մասնաժողովոյ յանուն Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց ուղղած մի յայտարարութեան հետ եղած տեղեկութիւններէն հետագայ հաշիւը քաղելով հրատարակել արժան կհամարիմք։

Մ—պ.

			Ռուբ.	Կ.
Օգոստոսի	18,	Ա. Անանովից ստորագրութեամբ ժողոված . . .	9531	93
»	»	Կ. Ռէբութովից ստորագրութեամբ հաւաքուած .	204	
»	»	Բ. Սուրդունովից ստորագրութեամբ հաւաքուած .	689	
»	»	Առևտրական բանկի տոմսակների տոկոսից . . .	41	72
»	23,	Գ. Երծրունուց ստորագրութեամբ հաւաքուած .	323	21

Սեպտեմբեր	5,	Գոմբօրի հասարակութիւնից	72	17
»	»	Լ. Մելիք Բէգլարովից արուեստաւորներից հաւաքուած	40	
»	»	Գ. Երծրունուց ստորագրութեամբ հաւաքուած .	100	
»	»	Կ. Բէբութովից ստորագրութեամբ հաւաքուած .	106	
»	16,	Թիֆլիսի ժողովից Թիֆլիսի առևտրական բանկի տոմսակ	1601	
»	»	Առևտրական բանկից դնումների տոկոսից . . .	11	48
»	»	Գ. Երծրունուց ստորագրութեամբ ժողոված . .	797	13
»	»	Բ. Սուրգունովից ստորագրութեամբ ժողոված .	764	
»	23,	Ա. Յովհաննէսեանից ստորագրութեամբ ժողոված .	700	
»	»	Ա. Անանովից Ասարխանի մէջ ստորագրութեամբ ժողոված	1447	
»	30,	Սեպտեմբերի 29 ին Աղէքսանդրեան այգիում տուած ժողովրդական զբօսանքից	4472	
		Ընդ ամենն	20900	64

Ծախս.

Սեպտեմ.	5,	Ուղարկած է Երևան Ա. Խատիսովին փոխանակագիր Սողոմոն Մելիքովի փոստի ծախսով . . .	1000	23
»	7,	Տուած է պ. Գամբարովին ժողովրդական զբօսանքի պատրաստութեան համար	200	
»	15,	Տուած Գ. Երծրունունզիւանատան ծախսերի համար	100	
»	»	Վճարած է Երևան ուղարկած դեղերի ճանապարհի ծախս	23	
»	19,	Տուած է Մ. Սալամբէգովին ժողովրդական զբօսանքի պատրաստութեան համար	300	
»	»	Ուղարկած է Երևան Յ. Խատիսովին փոխանակագիր Զաքարիա Գէորգովից փոստի ծախսով . .	2000	23
»	20,	Տուած է Կ. Մուրթաֆովին գաղթականների համար առած ապրանքի համար հաշիւ № 128 . .	1108	80
»	22,	Տուած է Յ. Զիլթախովին ժողովրդական զբօսանքի համար առնված իրեղէնների համար . . .	34	20
»	»	Յ. Զիլթախովին գաղթականների համար առած ապրանքի համար	855	45
»	»	Մշակներ	3	50
»	23,	Պ. Գուրգէնբէգովին ֆէյերվերկի համար . . .	100	
»	»	Տուած է Պ. Գամբարովին ժողովրդական զբօսանքի պատրաստութեան համար	200	
»	»	Թիֆլիսի Առևտրական բանկի ընթացող հաշուում	14962	
»	»	Առձեռն փող կասայում	13	23
		Ընդ ամենը	20900	64

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԻՒԹՈՑ Ժ-ՐԴ ՀԱՏՈՐԻ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՑ

ԿՐՕՆԱԿԱՆ: — Արժանաւորաց յարգը, երես 5: — Դիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի ի Կաթոլիկութիւն, 7, 45, 84, 128, 167, 205, 244: — Շնորհաւոր Ծնունդ եւ Մկրտութիւն Քրիստոսի, 44: — Ս. Սանդուխտ, 42, 51, 88: — Ի մայրենի Եկեղեցի, 44: — Քարոզիչք, 82: — Տարարնակ Հայկազանց մէջ եղած կրօնական եւ զրականական անջրպետը, 124: — Եկեղեցական վարչութեան դէմ խոչընդոտներ, 150: — Եպիսկոպոսութիւն եւ Եպիսկոպոսունք, 164: — Երգ Տիրամօրն ի ծնունդն Յիսուսի, 173: — Աբգարի նամակը առ Յիսուս Քրիստոս, եւ նորա պատասխանը առ Աբգար, 204: — Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի վիճակ, 241: Հայոց Եկեղեցւոյ ի գաղթականութենէ տեսած արդիւնքը, 282: — Յիսուսի Քրիստոսի այլ եւ այլ պատկերների մասին, 286, 523: — Կղերական կրթութենէ մի նոր հետեւանք, 324: — Ո՞ւր պէտք է պատրաստել քարոզիչները, 364: — Բարենպատակ հիմնարկութիւնք եւ Եկեղեցական — Ազգային ապահովիչ դպրոցք, 402: — Պետրոս Ա. Կաթուղիկոս եւ Գեոարդել Սուրբ Նշան, 442:

ՊԱՏՄԱԿԱՆ: — Ճանապարհորդութիւն Հայաստանումը, 17, 57, 92, 134, 174, 208, 254, 295, 334, 370, 405, 447, (ի յետագայս): — Անդրանիկ Կոնդակ Եփրէմ Կաթուղիկոսի, 365:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: — Հայկական դպրոցաց արդի եւ ապագայ վիճակին համառօտ տեսութիւնը, 67: — Զմեռն ի Գաղղիա. — Ս.ուեստահանդէսն Գաղղիոյ ի 1878 ի. — Հայք ի նոյն արուեստահանդիսի, եւն, 102: — Կենդանի կմախք, 108: — Լեհաց դաղթականութիւնը յՈվկիանիա, 110: — Եւրոպացւոց գաղափարը Հայոց վերայ. — Հայոց վաճառականական եւն յարաբերութիւնք ընդ Գաղղիոյ եւն, 185: — Ս.ղի Ազգային ընդհանուր Դպրոցաց քանի մի թերութիւնները, 224: — Ֆրանսիայի եւ Գերմանիայի մէջ եղած տարբերութիւնը. — Ազգային ինքնուրոյնութիւն. — Սարագրուրդ եւ Հայ Ուսանողներ. — Գոթա եւ վարժապետանոց նորա. — Ենա եւ Հայ ուսանողներ, 337: — Անգլիական թայմզ լրագրի սկզբնաւորութիւնը եւ նորա յառաջադիմութեան ընթացքը, 419: — Զոլլցին հու մահը. — Մէժլիս. — Գիւլը նէյան դուռնան, 460:

ԲԱՐՈՅԱԿԱՆ: — Շնորհաւոր նոր տարի, 27: — Նոր կեանք, 28: — Խօսնակն Աւարայրի, 75: — Մեզ շատ բան է մնացած, 110: — Յաղագս առաքինութեան, 112: — Իրաւունք հոտառութեան, 148: — Գարուն պանդխտին, 149: — Բառածայն դպրոցասիրութիւն, 150: — Լուսաւորեալ դար, 230: — Աշխարհս փոխուած է՝ թէ մարդը. կամ հնասէրք եւ նորասէրք, 262: — Բրուտը եւ երկրագործը, 268: — Ուղտը եւ Ազուէսը, 269: — Հայցուածք Պարսկահայի, 308: — Վեհ ոգի, 309: — Ազուէսը եւ իր շուաքը, 314: — Ստախօսի կարասը, 312: — Գողի Պատասխանը, 312: — Գողի խրատը, 313: — Գողի խրատը (դարձեալ) 313: — Առասպել եւ ճշմարտութիւն, 342: — Խելք եւ անյաջողութիւն, 384: — Տեսարան ծմերան, 385: — Գանան եւ սապատողն, 386: — Ծերունի Հայն, 387: — Բողոք Պարսկահայի, 426: — Ծերունւոյ հրաժարականը եւ մահը, 428: — Դէղիուլ, 428: — Ես եւ իմ սիրտս, 463:

ԱԶԳԱՅԻՆ: — Թիւ Ա: — Պաշտօնատուութիւնք: — Բննիչք յԱղէքսանդրապոլ: — Մշակ: — Վերադարձ ի մայրենի եկեղեցի: — Հանդիստ Վրթանէս վարդապետի Մուրատեանց: — Ի Շուշի քաղաքէ: —

Խափանեալ Տպարան Հայոց Աստրախան քաղաքի: — Թատրոն ի Վաղարշապատ: — Սուրհանդակի Բիւզանդեան: — Նպաստ Մանչէսթէրի Հայոց: — Զախորդութիւն ի Հնդկաստան: — Գրաբառ: — Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլսոյ: — Դիտելու կարօտ ճշմարտութիւն մը, 28—40

Թիւ Բ: — Ի Բթաւիոյ Հնդկաստանի: — Պ. Աղէքսանդր Խահակեանց: — Խաչանշան: — Ստեփաննոս Աւագ Բահանայ Ֆէմիրճօղլեանց: — Ի Նողայսքէ, 74—80:

Թիւ Գ: — Պ. Մովսէս Յարութիւնեանց: — Մշակ: — Տարօրինակ դիսաւորներ: — Աստրախանէն: — Վրիպակ, 117—120:

Թիւ Դ: — Խաչանշանք: — Եպիսկոպոսական ծեռնադրութիւն: — Փոխանորդ Գանձակու: — Նուէրք: — Գաբրիէլ Արքեպիսկոպոս: — Ի Թէհրանէ: — Երեւանու Հայոց Օրիորդաց ծխական դպրոցի հաշիւ: — Դպրոց Հայոց Գէօզէլ-Տէրէի: — Նուէր Կ. Աղտարեանցի: — Շնորհակալութիւն: — Նուէր Գ. Ճղնաւորեանցի: — Հունձք Կարապետեան դպրոցի Ախալցխոյ: — Տարեկան հաշիւ Ս. Աստուածածնի Եկեղ. Հայոց Սիմֆերոպոլու, 152—160:

Թիւ Ե: — Նուէրներ: — Հրահանգ վասն ընտրութեան աշակերտաց, որք կամիցին մտանել յառաջին դասարան ճեմարանիս: — Տարեկան հաշիւ Խորհրդարանի Գասպարեան Աղքատանոցին Հայոց Մոսկվայի: — Աստրախանէն: — Տարեկան հաշիւ Ս. Սամպիտեան Օրիորդաց դպրոցի Հայոց Շամախւոյ: — Ախալքալաքէն, 193—200:

Թիւ Զ: — Ուղեւորութիւն Զինաբնակ եւ Հնդկաբնակ Հայոց մէջ: — Նուէր Տիգրանեան եղբարց: — Անդրէաս եւ Գաբրիէլ Արքեպիսկոպոսունք: — Վրթանէս վարդապետ Խաժակնեան: — Ախալքալաքէն: — Տարեդարձ, 234—240:

Թիւ Է: — Բարձր. Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայեվիչ Կովկասեան Փոխարքայն ի Ս. Էջմիածին: — Ի Նպաստ Բաղրեւանդցի Հայոց ի ճեմարանի: — Հանդուցեալ Սարգիս վարդապետ Թէոդորեան: — Բաղրեւանդցի Հայք: — Առաջնորդական Փոխանորդ: — Պ. Գուլոյի: — Սիմֆէրապոլոյ Հայոց Խմդպրոց եւ կրթական ծրագիր: — Կտակ Յարութիւն Փուրվարդեանցի: — Ի Թէլաւէ: — Ախալցխայէ, 270—280:

Թիւ Ը: — Կտակ հանդուցեալ Մարիամայ Յ. Յօնանեանց եւ Մարիամեան Յովնանեանց դպրոց օրիորդաց: — Դավրիժէն Նպաստ: — Գօլոսի խմբագրութեան կողմանէ: — Պ. Ստեփաննոս Վարդանեան: — Պաշտպանք ծխական դպրոցաց Հայոց Աստրախանու: — Ուղղելի վրիպակք, 314—320:

Թիւ Թ: — Հանդէսք տօնախմբութեան անուան Վեհ. Հայրապետի Ազգիս Տ. Տ. Գէորգայ Դ. եւ Երրորդ տարեդարձի բացման ճեմարանի Ս. Էջմիածնի: — Նուիրատու Դավրիժեցիք: — Երրորդ դասարանք դպրոցաց Հայոց Աստրախանու: — Թէհրանաբնակ Հայք եւ Մահմետական Վրացիք, 345—360:

Թիւ Ժ: — Ս. Ղազարու վանք: — Ի Ս. Պետերբուրգէ: — Հաշիւ Հոգաբարձական խորհրդարանի Մարդասիրական Ընկերութեան Նոր-Նախիջեւանի: — Հաշիւ Մարդասիրական Ընկերութեան Բաղուայ, 388—400:

Թիւ ԺԱ: — Նշանաղրութիւն եւ զեղծմունք: — Պ. Մ. Սանասարեանց եւ Ա. Յովհաննէսեանց: — Տ. Աննայ Աղտալեանց: — Գեր. Հերման Եպիսկոպոս: — Հանդէս բացման Մարիամեան-Յովնանեան դպրոցին օրիորդաց Հայոց ի Տփխիս: — Պ. Ղեւոնդ Ղազարեան եւ նորակառոյց օրիորդաց դպրոց Հայոց Յերեւան: — Աստրախանէն: — Պաշտօնական, Կարգալոյծ Աբեղայք, 429—440:

Թիւ ԺԲ: — Մանչեսթէրաբնակ Հայք: — Շնորհակալութիւն առ Պ. Սանասարեանց: — Տփխիսեան նպաստահաւաք Մասնաժողովոյ հաշիւ: — Բովանդակութիւն նիւթոց Ժ.դ շրջանի Արարատ ամսագրոյ: — Ցուցակ բաժանորդաց, 464—480:

Շնորհաւոր եւ Ցայտարարութիւնք Արարատ Ամսագրոյ: 3, 404, 441:

ՅՈՒՅՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

Ի-ՐԴ ԶՐՔԱՆԻ (1877) ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ·

ԱԳՈՒԼԻՍ Ն. — Վ.

Ա.եսոս և Յակոբ քհնյք.
Մեսրովբ քհ. գիւղատեռանց
Մովսէս վ.ք. մեր. սուրբանեանց
Սարգիս քհ. ս. մինասեանց
Սիմէոն քհ. ալգարեանց
Թովմաս ասլանեանց
Խաչատուր դպ. յովհաննէսեանց
Հայրապետ արապիանեանց ընթերցարան
Հաբեւոր դպրոցն Ագուլեաց
Մկրտիչ ս. մկրտչեանց

ԱԳԳԻԵՐՄԱՆ

Աբրահամ քհ. մարութեանց
Գէորգ ս. քհ. մարութեանց
Յովհ. քհ. պ. գալբաքճեանց
Տիս· դպրոց
Սահակ ասատուրեան

ԱԽԱՆՑԽԱՆ

Գրիգոր Արքեպիսկոպոս սարգսեանց
Աբրահամ քհ. զաքէրեանց
Բարդուղիմէոս քհ. ի Սապէլ
Գէորգ քհ. գրիգորեան
Եղիա ս. քհ. համբարձումեանց
Թադէոս քհ. ս. վարդանեանց
Կարապետ քհ. ս. գրիգորեան
,, ,, ի Պոնոյ
,, ,, մարարոսեան
Համբարձում քհ. ջրպետեանց
Մարտիրոս քհ. մեծատաւնեանց
Մեսրովբ քհ. կանչեանց
Մկրտիչ քհ. թադոյեանց յԱծղոր
,, քհ. ս. ս. ի Տուզլուխ
Յովհ. ս. քհ. ս. մարգարեանց
Աշոտ պէպիպեանց
Ա.եսոնք պօղոյեանց
Գրիգոր բագրատեանց
Թէոդորոս մկրտչեան.
Կարապետեան ստեփանոսեան.
Զաքարոս դպ. բ. պահլաւունի
Մկրտիչ դաւիթեանց
Յարութիւն աղնաւուրեանց
Յովհաննէս վանցեանց
Պապայել սարգսիկեանց
Սարգիս յ. հազարապետեանց
Վարդանեանց դպրոց (նաւեր ի Վարդանեանցէ)
Տիգրան դպ· կ. սիմակեանց

ԱԽԱԼՔԱԼԱԿ

Խաչէն քհ. բարսղեանց
Յարութիւն և Վարդան քհնյք.
Յովհաննէս քհ. քաջազանի
Սարգիս քհ. մարգարեան
Սիմէոն ս. քհ.
Ստեփաննոս քհ.
Թադէոս սարկ. դասապարեանց
Գրիգոր ս. ս. ստեփրծօղլեանց

Ի ՎԻՆԱԿԻՆ

Վերին բաժին Ախալքալակայ

Զաքարիա Միքայէլ քհ.
,, Պապայէլ քհ.
Ալաթոռնեան Բարսեղ քհ.
Ականայ Սիմէոն քհ.
Ադոռ Զաքարիա քհ.
Դրակիկ մեծ Բարսեղ քհ.
,, փոքր Դաւթոս քհ.
Դրակով Կարապետ քհ.
Բարալեր Կարապետ քհ.
Բզաւեր Մաթէոս քհ.
Բոզղոյեան Գալուստ քհ.
Բոզոնաշեր Դաւիթ քհ.
Գանձա Մուքիսա քհ.
,, Մկրտիչ վարժապ.
Գեսոնտերի մ. Յակոբ քհ.
,, Յար. Յովհաննես.
Գիւմրեցի Առաքել քհ.
,, Մաթէոս քհ.
Գում Սիմէոն քհ.
Էլիտիլա Արիստակէս քհ.
Էլիտիլա-ամ. Խաչատուր քհ.
Թափլայ Գրիգոր քհ.
Թարոսանատր Յարութիւն քհ.
Լուսատուղլ Ղուկաս քհ.
Խանդո Խաչատուր քհ.
Խանչլլի մ. Պողոս քհ.
,, փ. Վարդան քհ.
Խուպիա Մկրտիչ քհ.
Խորենիա Վարդան քհ.
Կարծախ Մարտիրոս քհ.
,, Յակոբ քհ.
Կոզիա Պետրոս քհ.
Ղազարոնա Ստեփաննոս քհ.
Ղօճարեկ Մկրտիչ քհ.
Ղզլբի.-մօլիր· Աղեքսանդր քհ.
Ճանճղա Գրիգոր քհ
,, Յակոբ քհ.
Մուճաստիա Կարապետ քհ.
Մարզարա Նիքոլ քհ.
Մերիմնա Իսահակ քհ.
Մօլիք Արշակ սարկ. ս. գալաստեան
Պաղիս Մինաս վ.ք.
Ջիկիլանեն Աւետիս քհ.
,, Մամբրէ քհ.
Սաղիսա Գրիգոր քհ.
,, Ստեփաննոս քհ.
Սուղլա Մկրտիչ քհ.
,, Սարգիս քհ.
Վալեան Գաբրիէլ քհ.
,, Կարապետ դպ.
Տամալա Զաքարիա քհ.
Տաւաշ Կարապետ քհ.
,, Մարտիրոս քհ.
,, Շմաւոն դպ. եղիսեան
Տեղիք Բարդուղիմէոս և Թադէոս քհնյք.
Տեղիսկ Եղիշէ քհ.
,, Համազասպ քհ.
Փակ Ստեփաննոս քհ.
Օղաշերտա Յովհաննէս քհ.
Օրօճօղար Ղեւոնդ քհ.

Ի բաժնին Ծալկայի

Այազմա Թորոս քհ.
Աշիսլա Ղազարոս քհ.
,, Յովսէփ քհ.
Դերսէ Աբրահամ քհ.
,, Դանիէլ քհ.
,, Գաբր. պետրոսեան
Խալ Խաչատուր ոսկանեան
Ղզլբիլիսա Յովհաննէս քհ.
Ղեսդրա Եղիա քհ.
Ղուշճի Յովհաննէս քհ.
Նեբրովիան Յակոբ քհ.
Պուռնաշեր և Յարութիւն քհ.

ԱՂԼԻԲԱՆԴԱՊՈՒ

Աբրահամ քհ. գրիգորեան
Ագեքսանդր քհ. ամատունեանց
Գէորգ քհ. ս. յովհաննէսեան
Գրիգոր քհ.
Դաւիթ քհ. ս. սիմէոնեանց
,, քհ. ս. ստեփանեանց
Թադէոս քհ. ս. յովհաննէսեան
Խաչատուր քհ. քեալաչեանց
Կարապետ ս. քհ. ասաքելեան
,, քհ. մուշեղեանց
Ղազար քհ. ս. գրիգորեանց
Մատթէոս քհ. ս. մատթէոսեան
Մարտիրոս քհ. կարապետեան
Մարտիրոս քհ. ս. պողոսեան
Մկրտիչ քհ. ս. ասեռիսեան
